

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍ Բ.  
ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

## ՊՍԱԿ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ  
ՍՈՒՐԲ ՎԱՐԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ՈՒՂՂՈՒԱԾ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ,  
ԿՂԵՐԻՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐԻՆ



*Թարգմանեց՝*

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Վահէ Ղազարեան*

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Սուրբ Կոյս Մարիամի Վարդարանը - Աստծոյ Հոգու շնչով՝ երկրորդ Հազարամեակի ընթացքում աստիճանաբար կազմաւորուած - բազմաթիւ Սրբերի կողմից սիրուած եւ Եկեղեցու պաշտօնական Ուսուցման կողմից քաջալերուած աղօթք է: Իր պարզութեան եւ խորութեան մէջ, նաեւ Հազիւ սկսուած այս երրորդ Հազարամեակի ընթացքում մնում է մեծ իմաստով ծանրաբեռնուած աղօթք, սահմանուած՝ սրբութեան պտուղներ հասունացնելու: Այն լաւագոյնս զետեղուած է քրիստոնէութեան հոգեւոր ուղեւորութեան մէջ, քրիստոնէութեան՝ որ երկու Հազար տարի յետոյ ոչինչ չի կորցրել իր սկզբնական թարմութիւնից, եւ այժմ զգում է իրեն Աստծոյ Հոգուց մղուած՝ «տարածք բացելու» («duc in altum!»), կարողանալու համար վերստին պատմել, աւելին՝ «աղաղակել» Քրիստոսը աշխարհին, որպէս Տէր եւ Փրկիչ, որպէս «ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յվհ 14, 6), որպէս «մարդկային պատմութեան աւարտակէտը, առանցքը՝ որին են դիմում պատմութեան եւ քաղաքակրթութեան գաղափարականները»<sup>1</sup>:

Վարդարանն, իրօք, իր մարեմական դիմագծով յատկանշուած լինելով հանդերձ, քրիստոսաբանական սիրտ ունեցող աղօթք է: Իրեն բաղադրող տարրերի ժուժկալուութեամբ, իր մէջ կենտրոնացնում է «-Երարանական ամբողջ պարգաւի խորութիւնը, որի ամփոփումն է գրեթէ<sup>2</sup>: Նրանում արձագանքում է Մարիամի աղօթքը, Մարիամի մշտնջենաւոր «Մեծացո՛ւցէ՛»՝ փրկարար Մարդեղութեան իրադարձութեան համար, որ սկիզբ առաւ իր կուսական որովայնի մէջ: Վարդարանով՝ քրիստոնեայ ժողովուրդը յաճախում է Մարիամի դարձումը, թոյլատրելով՝ որ աղօթքը առաջնորդի եւ ներմուծի իրեն դէպի Քրիստոսի դէմքի գեղեցկութեան հայեցողութիւնը եւ Նրա սիրոյ խորութիւնների փորձառութիւնը: Վարդարանի շնորհիւ, հաւատացեալը մօտենում է շնորհի առատութեանը, գրեթէ ինքնին Փրկչի Մօր ձեռքերից ընդունելով այն:

## ՀՌՈՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԸ ԵՒ ՎԱՐԳԱՐԱՆԸ

2. Այս աղօթքին մեծ կարեւորութիւն են ընծայել իմ Նախորդներից շատերը: Իւրայատուկ երախտիքներ ունեցաւ Լեւոն ԺԳ-ը, որ 1883 թուականի Սեպտեմբերի 1ին հրատարակեց «Առափելական Բարձրագոյն պաշտօնը» կոնդակը<sup>3</sup>, բարձր արտայայտութիւն՝ որով սկիզբն էր դնում այս աղօթքի վերաբերեալ ուրիշ բազմաթիւ գեկոյցների, այն մատնանշելով որպէս հասարակութեան չարիքների դէմ հոգեւոր արդիւնաւէտ գործիք: Մեզ աւելի մօտ Քահանայապետներից, որ ժողովական տարիների ընթացքում երեւելի դարձան Վարդարանի խրախուսման գործով, կամենում եմ յիշել Երանելի Յովհաննէս ԻԳ-ին<sup>4</sup> եւ յատկապէս Պօղոս Զ.ին, որ «Մարեմական Բարեպաշտութիւն» Առաքելական

<sup>1</sup> Վատիկան. Բ. Համամիութ. ժող., Հով. Սահմ. Ժամանակակից աշխարհի մէջ գտնուող Եկեղեցու մասին, *Gaudium et spes* (Բերկրանք եւ յոյս) 45.  
<sup>2</sup> Պօղոս Զ., Առաք. Յորդոր *Marialis cultus* (Մարեմական բարեպաշտութիւն) (2 febbraio 1974), 42: *AAS* 66 (1974), 153.  
<sup>3</sup> Հմմտ. *Supremi apostolatus officio*, in *Acta Leonis XIII*, 3 (1884), 280-289.  
<sup>4</sup> Յիշատակութեան արժանի է, ի մասնաւորի, իր Առաքելական Նամակը Վարդարանի մասին, «*Il religioso convegno*» (Կրօնական հաւաքոյթ) (29 settembre 1961): *AAS* 53 (1961), 641-647.

Յորդորի մէջ ընդգծեց, Վատիկանեան Բ. Համամիութենական ժողովի ներշնչումներէ հետ ներդաշնակութեամբ, Վարդարանի աւետարանական բնոյթը եւ նրա քրիստոսաբանական կողմնորոշումը:

Ես ինքս, ապա, ոչ մէկ առիթ չկորցրեցի՝ խրախուսելու համար Վարդարանի յաճախակի արտասանութիւնը: Երիտասարդական տարիներէիցս սկսած, այս աղօթքը կարեւոր տեղ է ունեցել իմ հոգեւոր կեանքում: Այս իրականութիւնը զօրաւոր կերպով վերլիչեցի դէպի Լեհաստան կատարած վերջին ճամփորդութեանս ընթացքում, յատկապէս՝ երբ այցելեցի Քալուարիայի Սրբավայր: Վարդարանը ընկերացաւ ինձ ուրախութեան եւ փորձութեան պահերին: Նրան վստահեցի բազում մտահոգութիւններ, նրանում միշտ մխիթարութիւն գտայ: Քսանչորս տարի առաջ, 1978 թուականի Հոկտեմբերի 29ին, Պետրոսի Գահին ընտրութիւնիցս հազիւ երկու շաբաթ առաջ, գրեթէ ամբողջ հոգիս բացելով՝ այսպէս արտայայտուեցի. «Վարդարանը նախասիրածս աղօթքն է: Հիանալի՜ աղօթք: Հիանալի՜ իր պարզութեան մէջ, եւ հիանալի՜ իր խորութեան մէջ: [...] Կարելի է ասել՝ թէ Վարդարանը, որոշ եղանակով, աղօթք-մեկնաբանութիւնն է Վատիկանեան Բ. ժողովի Լ.յ» «սուբապ Սահմանադրութեան վերջին գլխի, որ նուիրուած է Քրիստոսի եւ Եկեղեցու խորհրդից ներս Աստուածամօր սքանչելի ներկայութեանը: Իսկապէս, "Ողջոյն՝ Վեյ, Մարիամ" խօսքերի խորքի վրայ՝ հոգու աչքերի առջեւից անցնում են Յիսուս Քրիստոսի կեանքի կարեւորագոյն դրուագները: Դրանք դասաւորուում են բերկրանքի, տառապանքի եւ փառքի խորհուրդների ամբողջութեան մէջ եւ մեզ կենսալի հաղորդութեան մէջ են դնում Յիսուսի հետ, ընդմէջ - կարող ենք ասել - Իր Մօր Սրտի: Միաժամանակ, մեր սիրտը կարող է Վարդարանի այս տասնեակների մէջ ամփոփել բոլոր իրողութիւնները՝ որ կազմում են անհատի, ընտանիքի, ազգի, Եկեղեցու եւ մարդկութեան կեանքը: Անձնական կեանքի իրադարձութիւնները եւ մերձաւորների կեանքի իրադարձութիւնները եւ, ի մասնաւորի, նրանց՝ որոնք մեր ամենամտերիմներն են, ամենամօտ կանգնածները մեր սրտին: Այսպիսով, Վարդարանի պարզ աղօթքը բաբախում է մարդկային կեանքի ամանակով»<sup>5</sup>:

Այս խօսքերով, սիրեցեալ եղբայրներ եւ քոյրեր իմ, Վարդարանի ամէնօրեայ ամանակից ներս էի մոծում Քաճանայապետութեանս առաջին դարին: Այսօր, որպէս Պետրոսի Յաջորդը կարարա՞ծ Ժառանգութեանս խանձինգերորդ դարուայ սկզբնաորութեան, կամենում եմ կատարել միեւնոյն արարքը: Այս տարիների ընթացքում քանի՜ շնորհներ ստացայ Սուրբ Կոյսից, Վարդարանի միջոցով. Մեծացո՞ւցէ անչն իմ զՏէր: Կամենում եմ երախտիքիս արտայայտութիւնը մատուցել Տիրոջը՝ գործածելով խօսքերը Իր Ամենասրբուհի Մօր, որի պաշտպանութեան ներքոյ եմ դրել պետրոսեան պաշտօնէութիւնս. *Totus tuus* (Ամէն բան քոնն է):

### ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002 – ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003. ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ

3. Այս իսկ պատճառով, «Սկսող նոր Հապարամեակը» Առաքելական Նամակում ներկայացուած խորհրդածութեան ալիքին հետեւելով - ուր Աստուծոյ ժողովրդին հրաւիրեցի, յրեւեանական փորձառութիւնից յետոյ, «կրկին ճանապարհ ընկնել՝ Քրիստոսին որպէս մեկնակէտ ունենալով»<sup>6</sup> - կարիքը զգացի խորացնելու մի խորհրդածութիւն Վարդարանի մասին, գրեթէ մարեմական թագ դնելով Առաքելական այդ Նամակին, խրախուսելու համար Քրիստոսի դէմքի հայեցողութիւնը, Իր Ամենասրբուհի Մօր ընկերակցութեամբ եւ ուսուցողութեամբ: Վարդարանը աղօթել,

<sup>5</sup> Angelus (Հրեշտակ Տեառն): Insegnamenti (Ուսուցումներ) I (1978), 75-76.

<sup>6</sup> Novo millennio ineunte: AAS 93 (2001), 285.

իրօք, ա՛յլ բան չէ, եթէ ոչ՝ Մարտինի Հեփ Հայել Քրիստոսի գլխի: Այս հրահանգին մեծագույն կարեւորութիւն ընծայելու նպատակով, որպէս առիթ ունենալով Լեւոն ԺԳ-ի վերոյիշեալ Կոնդակի հարիւրքսաներորդ տարեդարձի մերձաւորութիւնը, կամենում եմ՝ որ այս աղօթքը տարուայ ընթացքում յատուկ ուշադրութեամբ ներկայացուի եւ արժեւորուի քրիստոնեայ զանազան համայնքներից ներս: Հրահանգում եմ, ուստի, տարին՝ որ գնում է այս տարուայ Հոկտեմբերից մինչեւ 2003 թուականի Հոկտեմբերը, Վարդարանի Տարի:

Հովուական այս ցուցմունքը յանձնում եմ եկեղեցային իւրաքանչիւր համայնքի նախաձեռնութեանը: Սրանով նպատակ չունեմ խճողելու, այլ ընդհակառակն՝ ամբողջացնելու եւ ամրապնդելու տեղական եկեղեցիների հովուական ծրագրերը: Վստահ եմ, որ այս ցուցմունքը կ'ընդունէք վեհանձնութեամբ եւ պատրաստակամութեամբ: Վարդարանը, երբ բացայայտում է իր ամբողջ իմաստով, քրիստոնէական կեանքի սրտին բերում եւ ընծայում է հոգեւոր եւ մանկավարժական այնքա՛ն սովորական՝ որքա՛ն արգասաւոր պատեհութիւն անձնական հայեցողութեան, Աստուծոյ ժողովրդի կազմաւորման եւ նորոգ աւետարանումի: Կուզէի յիշեցնել Վարդարանը նաեւ ուրիշ ուրախալի տարեդարձի կապակցութեամբ. 40 տարի է անցել Վատիկանեան Բ. Համամիութենական ժողովի բացման օրից (11 Հոկտեմբեր 1962). այդ «մեծ պարգեւ»ը, որ Աստուծոյ հոգին նախապատրաստել էր մեր ժամանակուայ եկեղեցու համար<sup>7</sup>:

## ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԴԵՄ

4. Այս նախաձեռնութեան պատեհութիւնը դուրս է ցայտում զանազան նկատումների միջից: Առաջինը վերաբերում է անյապաղ անհրաժեշտութեանը՝ դիմակայելու այս աղօթքի շուրջ ստեղծուած որոշակի ճգնաժամին. այս աղօթքի, որ պատմական եւ աստուածաբանական ներկայ բանակարգում ենթակայ է իր արժէքի անարդար նուազեցման եւ հետեւաբար՝ նոր սերունդներին սակաւ ներկայացուցելու վտանգին: Ոմանք կարծում են՝ թէ Ծէսի եւ Ժամերգութեան կենտրոնականութիւնը – որ իրաւացիօրէն ընդգծուած է Վատիկանեան Բ. Համամիութենական ժողովի կողմից – որպէս անհրաժեշտ հետեւանք ունի Վարդարանի կարեւորութեան նուազեցումը: Իրականում, ինչպէս ժամանակին ճշտեց Պօղոս Զ.ը, այս աղօթքը ո՛չ միայն չի ընդդիմանում Ծէսին եւ Ժամերգութեանը, այլ նրանց Համար յենարան է Հանդիսանում, քանի որ նրանց ներածութիւնն է եւ նրանց արձագանքը, հնարաւորութիւնը ստեղծելով ապրելու դրանք ներքին հոգեւոր մասնակցութեան լիութեամբ, նրանց պտուղները քաղելով ամէնօրեայ կեանքի ընթացքում:

Թերեւս կան նաեւ ոմանք, որ երկիւղը ունեն՝ թէ այս աղօթքը կարող է սակաւ համամիութենական լինել, մարեմական իր ցայտուն եւ շեշտուած բնոյթի պատճառով: Իրականում, Վարդարանը իր տեղը գտնում է Աստուածամօր ընծայուած բարեպաշտութեան ամենավճիտ հորիզոնի վրայ, ինչպէս ժողովը այն ուրուագծել էր. բարեպաշտութիւն, որ նպատակաուղղուած է դէպի քրիստոնէական հաւատքի քրիստոսաբանական կենտրոնը, այնպէս՝ որ «երբ մեծարւում է Մայրը, Որդին [...]

<sup>7</sup> Ժողովի նախապատրաստական տարիների ընթացքում, Յովհաննէս ԻԳ-ը չէր մոռացել հրահանգել քրիստոնեայ հասարակութիւնը Վարդարանի աղօթքին՝ եկեղեցային այդ իրադարձութեան յաջող ընթացքի եւ աւարտի դիտաւորութեամբ: Հմմտ. «Lettera al Cardinale Vicario» (Տեղապահ Ծիրանաւորին ուղղուած նամակը, 28 Սեպտեմբեր 1960): AAS 52 (1960), 814-817.

արժանաւոր կերպով ճանաչուի, սիրուի, փառաւորուի»<sup>8</sup>: Եթէ պատշաճ կերպով բացայայտուած լինի, Վարդարանը համամիութենական շարժմանը խոչընդոտ չէ, այլ՝ օգնական:

## ՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ

5. Բայց Վարդարանի գործածութիւնը ուժգին կերպով առաջարկելու ամենակարեւոր պատճառը իրողութիւնն է՝ որ այն մեծապէս արդիւնաւէտ միջոց է՝ նպաստելու համար հաւատացեալների մէջ խորհրդի-հոգեւորական խորհրդի-հոգեւորական յանձնառութեանը, որ «Սկսած նոր հասարակէր» Առաքելական Նամակում առաջարկել էի իբրեւ «սրբութեան իրական մանկավարժութիւն»։ «Ձգացում է կարիքը մի քրիստոնէութեան, որ տարբերուի նախ եւ առաջ «հոգեւորական»<sup>9</sup>։ Մինչ ժամանակակից մշակոյթից ներս, բազում հակասութիւններով հանդերձ, յայտնուում է հոգեկանութեան մի նոր պահանջ – խթանուած՝ նաեւ ուրիշ կրօնների գործադրած ազդեցութիւնից – առաւել քան երբեք անյետաձգելի է՝ որ մեր քրիստոնէական համայնքները դառնան «աղօթքի վաւերական դպրոցներ»<sup>10</sup> :

Վարդարանը զբաղեցնում է իր տեղը քրիստոնէական հայեցողութեան լաւագոյն եւ ամենապահով աւանդութեան մէջ: Արեւմուտքում զարգացած լինելով, Վարդարանը մտածական ինքնատիպ աղօթք է եւ համապատասխանում է, որոշակի կերպով, «սրտի աղօթքին» կամ «Յիսուսի աղօթքին», որ աճել եւ ծաղկել է քրիստոնէայ Արեւելքի պարսրոյ հոգի մէջ:

## ԱՂՕԹՔ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

6. Վարդարանի վերարժեւորմանը մեծագոյն այժմէութիւն հաղորդելուն գումարում են նաեւ պատմական որոշակի պարագաներ: Դրանցից առաջինը Աստուծոց խաղաղութեան պարգեւը պաղատելու անյապաղութիւնն է: Վարդարանը իմ Նախորդներին եւ իմ իսկ կողմից բազմաթիւ անգամներ առաջարկուել է որպէս խաղաղութեան համար կատարուած աղօթք: Մի Հազարամեակի սկզբնաւորութեան, որ ընթացք առաւ 2001 թուականի Սեպտեմբերի 11ի ոճրագործութեան զարհուրելի տեսարաններով եւ որ ամէն օր գրանցում է արիւնահեղութեան ու բռնութիւնների նորանոր իրավիճակներ աշխարհի բազմաթիւ տարածքներից ներս, վերստին բացայայտել Վարդարանը՝ նշանակում է խորասուզուել խորհրդի հայեցողութեան մէջ՝ նրա՝ որ «մեր խաղաղութիւնն է», կազմաւորած լինելով «երկուսից մէկ ժողովուրդ, խորտակելով բաժանման պարիսպը, որ նրանց միջեւ էր, այսինքն՝ թշնամութիւնը» (Եփս 2, 14): Հնարաւոր չէ, հետեւաբար, աղօթել Վարդարանը՝ առանց խաղաղութեան գործընթացի ծառայութեանը մեզ իսկապէս մասնակից զգալու, իւրայատուկ ուշադրութիւն ընծայելով Յիսուսի երկրին, որ տակաւին այսքա՛ն փորձութիւնների ենթակայ է, բայց այնքա՛ն սիրելի է քրիստոնէաների սրտին:

Մասնակցութեան եւ աղօթքի նմանօրինակ անյապաղութիւնը ծնւում է մեր ժամանակուայ ճգնաժամային միւս մարտադաշտի վրայ, որ է ընդհանրէր, հասարակութեան բլիթը, որ միշտ աւելի ու աւելի որոգայթների է ենթարկուում

<sup>8</sup> Եկեղեցու մասին Վարդ. Սահմ. *Lumen gentium* 66.

<sup>9</sup> N. 32: *AAS* 93 (2001), 288.

<sup>10</sup> *Ibid.*, 33, *l.c.*, 289.

գաղափարախօսական եւ կիրառական մակարդակներում գործող քայքայիչ ուժերի կողմից, որոնք սարսափով են դիտել տալիս այս հիմնական եւ անհրաժարելի հաստատութեան ապագան եւ, նրա հետ, ամբողջ հասարակութեան ճակատագիրը: Քրիստոնեայ ընտանիքներից ներս Վարդարանի վերարժեւորումը – ընտանիքի շուրջ կազմակերպուած հովուական առաւել լայն ծրագրերի շրջանակներում – ներկայանում է իբրեւ արդիւնաւէտ օգնութիւն՝ կասեցնելու համար այս դարաշրջանային ճգնաժամի կործանարար հետեւանքները:

## «ԱՀԱ ՔՈ ՄԱՅՐԸ» (ՅՎՏ 19, 27)

7. Բազմաթիւ նշաններ ցոյց են տալիս՝ թէ Սուրբ Կոյսը որքան է փափաքում այսօր եւս կիրարկել, ճիշտ այս աղօթքի միջոցով, մայրական այն հոգատարութիւնը՝ որին մահամերձ Փրկիչը վստահեց Եկեղեցու բոլոր որդիները, յանձինս նախասիրեալ աշակերտի. «Կին, ահա քո որդին» (ՅՎՏ 19, 26): Յայտնի են այն բազմազան դէպքերը, տասնիններորդ եւ քսաներորդ դարերի միջեւ, որոնց ընթացքում Տիրամայրը որոշակի կերպով զգալի դարձրեց իր ներկայութիւնը եւ իր ձայնը, յորդորելու համար Աստուծոյ ժողովուրդը՝ գործադրելու հայեցողական աղօթքի այս կերպը: Ի մասնաւորի կ'ուզէի յիշատակել – այն փորագրիչ ազդեցութեան պատճառով՝ որ տեւապէս գործում են քրիստոնեաների կեանքից ներս, եւ այն հեղինակաւոր ճանաչումի պատճառով՝ որ ստացան Եկեղեցուց – Լուրդի եւ Ֆաթիմայի յայտնութիւնները<sup>11</sup>, որոնց համապատասխան Սրբավայրերը նպատակակէտն են բազմաթիւ ուխտաւորների, որ փնտռում են սփոփանք եւ յոյս:

## ՎԿԱՆԵՐԻ ՀԵՏՁԵՐԻ ՎՐԱՅ

8. Անհնարին պիտի լինէր մէկ առ մէկ յիշատակել այստեղ անթիւ ու անհամար երամը այն Սրբերի, որոնք սրբութեան վաւերական ճանապարհ գտան Վարդարանի մէջ: Բաւական է յիշատակել սուրբ Լուի Մարի Գրինիոն դը Մոնֆորը, որ հեղինակն է Վարդարանի մասին մի թանկարժէք գրութեան<sup>12</sup>, եւ մեր ժամանակներին աւելի մօտ սրբերից՝ Հայր Փիո Փիէթրելչինացին, որի սրբադասման բերկրանքը ունեցայ մի քանի ամիս առաջ: Վարդարանի իրական առաքեալ լինելու իւրայատուկ պարզեւաշնորհը ունեցաւ, ապա, երանելի Բարթոլո Լոնգոն: Սրբութեան մէջ նրա անցած ճանապարհը յիմնուած է իր սրտի խորքում լսած ներշնչումի վրայ. «Ով տարածում է Վարդարանը, փրկուած է»<sup>13</sup>: Այս հիմքին յենուելով, նա կոչումը զգաց Փոմփէյում կառուցելու Սուրբ Վարդարանի Տիրամօրը նուիրուած մի տաճար, հին Քաղաքի աւերակների խորքի վրայ. Քաղաք, որ հազիւ էր ստացել քրիստոնէական աւետիսը՝ երբ 79 թուականին թաղուեց Վեզուվիոյի հրաբխային ժայթքման ներքոյ, եւ դարեր յետոյ պեղուեց եւ դուրս բերուեց մոխիրներից՝ ի վկայութիւն դասական քաղաքակրթութեան լոյսերի ու ստուերների:

<sup>11</sup> Յայտնի է եւ պէտք է ընդգծել, որ անհատական յայտնութիւնները չունեն հասարակաց յայտնութիւնների բնոյթը, որ կանոնական է ամբողջ Եկեղեցու համար: Եկեղեցական Հեղինակութեան պաշտօնն է կշռադատել, զանազանել եւ վաւերացնել անհատական յայտնութիւնների ճշմարտութիւնը եւ արժէքը հաւատացեալների բարեպաշտութեան համար:

<sup>12</sup> *Il segreto meraviglioso del Santo Rosario per convertirsi e salvarsi* (Սուրբ Վարդարանի սքանչելի գաղտնիքը՝ դարձի գալու եւ փրկուելու համար): *Opere*, 1, *Scritti Spirituali*, Roma 1990, pp. 729-843.

<sup>13</sup> B. Bartolo Longo, *Storia del Santuario di Pompei* (Փոմփէյի Սրբավայրի պատմութիւնը), Pompei 1990, p. 59.

Իր ամբողջ գործունեութեամբ եւ, ի մասնաւորի, «Տասնհինգ Շաբաթներ»ի միջոցով, Բարթոլոմէոս Լոնգոն զարգացրեց Վարդարանի քրիստոսաբանական եւ հայեցողական ոգին, իւրայատուկ քաջալերանք եւ գորավիզ գտնելով յանձինս Լեւոն ԺԳ.ի, «Վարդարանի Քահանայապետի»:

## ՂԼՈՒԽ Ա.

# ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԻՆՄԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԼՄԻ

### ԱՐԵՒԻ ՆՄԱՆ ՊԱՅԾԱՌ ՄԻ ԵՐԵՍ

9. «Եւ այլակերպուեց նրանց առջեւ. նրա երեսը փայլեց արեւի նման» (Մտթ 17, 2): Քրիստոսի Պայծառակերպութեան աւետարանական տեսարանը, ուր Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս երեք առաքեալները ներկայանում են որպէս Փրկչի գեղեցկութեամբ յափշտակուած, կարող է որդեգրուել իբրեւ *երեսնակն հայեցողութեան սրբապարկեր*: Աչքերը սեւեռել Քրիստոսի դէմքին, ճանաչել Նրա խորհուրդը՝ Նրա մարդկութեան բնական եւ տառապեալ ընթացքի մէջ, մինչեւ Հօր աջ կողմում բազմած եւ փառաւորուած Յարուցեալի մէջ վերջնականօրէն բացայայտուած աստուածային մեծվայելչութեան ըմբռնումը, ահա սա՛ է Քրիստոսի աշակերտներից իւրաքանչիւրի պարտականութիւնը. հետեւաբար, նաեւ մեր պարտականութիւնն է: Այս դէմքին հայելով, ինքներս մեզ բացում ենք ընկալելու Ամենասուրբ Երրորդութեան կեանքի խորհուրդը, միշտ նորոգ կերպով փորձառութիւնն ունենալու համար Հօր սիրոյ եւ վայելելու համար Սուրբ Հոգու բերկրանքը: Այսպիսով, մեզ համար նոյնպէս իրականանում է Պօղոս Առաքեալի խօսքը. «Հայելու նման անդրադարձնելով Տիրոջ փառքը, կերպարանափոխուում ենք այդ նոյն պատկերի համաձայն, փառքից փառք, ըստ Տիրոջ Հոգու ազդեցութեան» (2Կր 3, 18):

### ՄԱՐԻԱՄԸ ՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ

10. Յանձինս Մարիամի, Քրիստոսի հայեցողութիւնը գտնում է իր անգերազանցելի տիպարը: Որդու դէմքը նրան պատկանում է յատուկ տիտղոսով: Նրա որովայնից ներս կազմաւորուեց այդ դէմքը, ստանալով նրա հետ նաեւ մարդկային նմանութիւն, որ յիշեցնում է նրանց հոգեւոր սերտ կապը՝ որ, անշուշտ, շատ աւելի մեծ է: Քրիստոսի դէմքի հայեցողութեանը ոչ ոք նոյնքան յարատեւութեամբ նուիրուած չէ՝ որքան Մարիամը: Մարիամի սրտի աչքերը որոշակի կերպով կենտրոնանում են Յիսուսի վրայ Աւետումից իսկ սկսեալ, երբ Յիսուսին յղանում է Սուրբ Հոգու ներգործութեամբ. յաջորդ ամիսների ընթացքում սկսում է զգալ Նրա ներկայութիւնը եւ գուշակել Նրա դիմագծերը: Երբ վերջապէս լոյս աշխարհ է բերում իր Որդին Բեթղեհէմում, իր մարմնական աչքերը նոյնպէս քնքշութեամբ ուղղում են Նրա դէմքին, մինչ իր Որդին խանձարուրներով փաթաթում եւ դնում է մսուրի մէջ (հմմտ. Ղկա 2, 7):

Այդ վայրկեանից սկսած, պաշտամունքի հիացմամբ միշտ հարուստ, Մարիամի հայեացքը երբեք չի բաժանուելու Նրանից: Երբեմն լինելու է *հարցումնալի հայեացք*, ինչպէս տաճարից ներս Յիսուսին կորցնելու պատմութեան մէջ. «Որդեակ, ինչո՞ւ այս բանը արեցիր մեզ» (Ղկա 2, 48). լինելու է, ամէն պարագայի, *խորախափանց հայեացք*, ընդունակ՝ կարգալու Յիսուսի ներաշխարհից ներս, մինչեւ կարողանալը նշմարել Նրա ծածուկ զգացումները եւ գուշակել Նրա ընտրութիւնները, ինչպէս Կանայում (հմմտ. Յվզ 2, 5). ուրիշ անգամներ լինելու է *ցաւաճին հայեացք*, յատկապէս խաչի առջեւ, ուր

մի անգամ եւս լինելու է, որոշակի իմաստով, «ծննդկանի» հայեացք, քանի որ Մարիամը չի սահմանափակուելու Միածնի չարչարանքներին եւ մահուանը բերած իր մասնակցութեամբ, այլ ընդունելու է նաեւ նոր որդին, որ իրեն վստահուելու է յանձինս սիրեցեալ աշակերտի (հմտ. Յվհ 19, 26-27). Զատկի առաւօտեան լինելու է Լոսանջոս Կոլեջի, յարութեան բերկրանքի համար, եւ, վերջիվերջոյ, Բրաւաո Կոլեջի, Հոգեգալստեան օրը տեղի ունացած Հոգու հեղման զօրութեամբ (հմտ. Գրծ 1, 14):

## ՄԱՐԻԱՄԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

11. Մարիամը ապրում է աչքերը Քրիստոսի վրայ սեւեռած եւ գանձում է Նրա խօսքերից իւրաքանչիւրը. «Այս ամէնը պահում էր իր սրտում եւ խորհրդածում էր նրանց վրայ» (Ղկս 2, 19; հմտ. 2, 51): Յիսուսի վերաբերեալ յիշատակները, Մարիամի հոգու խորքում դրոշմուած, նրան ընկերակցել են ամէն տեսակ իրավիճակներից ներս, առաջնորդելով մտովին վերապրելու Որդու հետ միասին անցկացրած տարիների զանազան պահերը: Այդ յիշատակներն են, որ որոշակի իմաստով կազմել են «վարդարանը», որ Մարիամն ինքը յարատեւ աղօթել է իր երկրային կեանքի օրերին:

Եւ այժմ էլ, երկնային Երուսաղէմի ցնծալի նուագների մէջ, շնորհակալութեան եւ փառաբանութեան իր ունեցած պատճառները մնացել են անփոփոխ: Սրանք են՝ որ ներշնչում են հաղորդում պանդուխտ Եկեղեցու հանդէպ տածած նրա մայրական հոգածութեանը. Եկեղեցու, որի ներսում Մարիամը շարունակում է զարգացնել եւ տարածել աւետարանչուհու իր «պատմուածքի» ոստայնը: Մարիամը Լոսանջոսի անդամար ներկայացնում է իր Որդու «խորհուրդները», փափաքելով՝ որ լինեն նրանց հայեցողութեան առարկան, որպէսզի հնարաւորութիւնն ունենան սանձազերծելու իրենց ամբողջ փրկարար ուժը: Երբ աղօթում է Վարդարանը, քրիստոնեայ հասարակութիւնը ներդաշնակութեան մէջ է մտնում Մարիամի յիշատակների եւ հայեացքի հետ:

## ՎԱՐՂԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՅՈՂԱԿԱՆ ԱՂՕԹՔ

12. Վարդարանը, ճիշտ Մարիամի փորձառութիւնից մեկնելով, ցայտօն կերպով Լոսանջոսական աղօթի է: Իր այս յատկութիւնից զրկուելով, կորցնում է իր իրական էութիւնը, ինչպէս ընդգծում էր Պօղոս Զ.ը. «Առանց հայեցողութեան, Վարդարանը անշունչ մարմին է եւ իր արտասանութիւնը ենթակայ է բանաձեւուած խօսքերը մեքենայաբար կրկնելու եւ Յիսուսի ազդարարութեանը հակասելու վտանգին. ”Երբ աղօթէք, շատախօս մի՛ եղէք հեթանոսների նման, որոնք կարծում են՝ թէ իրենց բազում խօսքերի պատճառով լսելի են լինելու” (Մտթ 6, 7): Իր բնութեան համաձայն, Վարդարանի աղօթքը պահանջում է հանդարտ ամանակաւորում եւ գրեթէ մտածկոտ յապաղում, որոնք նպաստաւոր են հաւատացեալի կողմից Տիրոջ կեանքի խորհուրդների շուրջ կատարուած խորհրդածութեանը. այդ խորհուրդները հաւատացեալները դիտում են ընդմէջ Նրա Սրտի՝ ով Տիրոջը ամենամօտ կանգնածն է, եւ բացում են այդ խորհուրդների անքննելի հարստութիւնների դռները»<sup>14</sup>:

Կ'արժէ մէկ պահ կանգ առնել Պօղոս Զ.ի այս խորունկ մտածումի վրայ, դուրս ցայտեցնելու համար Վարդարանի յատկութիւններից մի քանիսը, որոնք լաւագոյնս են սահմանում նրա բնութագրումը ճիշտ որպէս քրիստոսաբանական հայեցողութիւն:

<sup>14</sup> Առաք. Յորդոր *Marialis cultus* (2 febbraio 1974), 47: AAS 66 (1974), 156.

## ՄԱՐԻԱՄԻ ՀԵՏ՝ ՅԻՇԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

13. Մարիամի գործադրած հայեցողությունը նախ եւ առաջ նշանակում է վառ պահել յիշողությունները: Սակայն, այս բառը հարկաւոր է հասկանալ յիշողութեան աստուածաշնչեան իմաստով (*zakar*), որը սեփական կեանքում ներկայ է դարձնում գործերը՝ որոնք Աստուած կատարել է փրկութեան պատմութեան ընթացքում: Աստուածաշունչը պատմութիւնն է փրկարար իրադարձութիւնների, որոնք իրենց զագաթնակէտին հասնում են յանձինս Ինքնին Քրիստոսի: Այս իրադարձութիւնները միայն եւ լոկ «երէկ» չեն. «իրկո-թեան նաե- «այօր»»ն են: Այս այժմէացումը իրագործում է յատկապէս Ծէսի մէջ. այն՝ ինչ Աստուած կատարել է դարեր առաջ, չի վերաբերում միմիայն իրադարձութիւնների ականատես վկաներին, այլ շնորհի իր պարզելով հասնում է բոլոր ժամանակների մարդկանց: Սա վաւերական է, որոշակի իմաստով, այս իրադարձութիւնների նկատմամբ ունեցած նաեւ միւս բոլոր բարեպաշտ մերձեցումների համար. «յիշել», հաւատքի եւ սիրոյ հոգեկան տրամադրուածութեամբ, նշանակում է բացուել շնորհի առաջ, որ Քրիստոս շահեց մեզ համար Իր կեանքի, մահուան եւ յարութեան խորհուրդներով:

Այս իսկ պատճառով, մինչ Վատիկանեան Բ. Ժողովի հետ միասին հաստատում ենք՝ որ Ծէսը, որպէս Քրիստոսի քահանայական պաշտօնի գործադրում եւ հասարակական պաշտամունք, «զագաթնակէտն է՝ դէպի ուր է ձգտում Եկեղեցու գործունէութիւնը, եւ, միաժամանակ, աղբիւրն է՝ որից բխում է իր ամբողջ ուժը»<sup>15</sup>, հարկաւոր է նաեւ մտաբերել՝ որ հոգեւոր կեանքը «չի սպառում Սրբազան Ծէսին բերած մասնակցութեամբ միայն: Քրիստոնեան, հասարակաց աղօթքին կանչուած լինելով հանդերձ, պէտք է ամփոփուի նաեւ իր սենեակից ներս, ծածուկ աղօթելու համար Հօրը (Հմմտ. Մթս 6, 6). աւելին, հարկաւոր է անդադար աղօթել, ինչպէս ուսուցանում է Առաքեալը (Հմմտ. 1Թս 5, 17)»<sup>16</sup>: Վարդարանը գտնում է իր տեղը, իր իւրաքանչեւութիւններով, «անդադար» աղօթքի այս բազմազան բեմահարթակի վրայ, եւ եթէ Ծէսը, Քրիստոսի եւ Եկեղեցու գործը, «իրկո-թեան նաե- «այօր»»ն է, Վարդարանը, որպէս Մարիամի հետ Քրիստոսի վերաբերեալ կատարուած խորհրդածութիւն, «իրկո-թեանը նպաստող հայեցողութիւնն է: Իսկապէս, խորհուրդից խորհուրդ յառաջանալով՝ խորասուզուել Փրկչի կեանքից ներս, որպէս արդիւնք ունի փաստը՝ որ այն ամէնը՝ ինչ Քրիստոս գործեց եւ Եկեղեցին այժմէացնում է, խորապէս իւրացում է հաւատացեալի կողմից եւ կաղապարում է նրա կեանքը:

## ՄԱՐԻԱՄԻՅ ՍՈՎՈՐԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

14. Քրիստոս՝ գերագոյն Ուսուցիչն է, յայտնողը եւ յայտնութիւնը: Խօսքը չի վերաբերում միայն ուսանելուն այն բաները՝ որոնք Ինքը սովորեցրել է, այլ՝ «...վորեւ Ինչնին Քրիստոսին»։ Բայց ուրիշ ո՞վ աւելի հմուտ դաստիարակ կարող է ճանաչուել այս գործում՝ քան Մարիամը: Եթէ աստուածային կողմից Հոգին է ներանձնական Ուսուցիչը՝ որ մեզ առաջնորդում է դէպի Քրիստոսի լիակատար ճշմարտութիւնը (Հմմտ. Յվհ 14, 26; 15, 26; 16, 13), մարդկային էակների շարքում՝ Մարիամից աւելի լաւ ոչ ոք չի ճանաչում Քրիստոսին, ոչ ոք աւելի լաւ՝ քան Իր Մայրը կարող է մեզ առաջնորդել Իր խորհրդի խորունկ ճանաչողութիւնից ներս:

<sup>15</sup> Սրբազան Ծէսի մասին Սահմ. Sacrosanctum Concilium 10.

<sup>16</sup> Նոյն, 12.

Յիսուսի կատարած «նշաններ»ից առաջինը - Կանայի հարսանիքի ժամանակ ջրի փոխակերպումը գինու - ցոյց է տալիս մեզ Մարիամին ճիշտ դաստիարակի դերում, մինչ յորդորում է սպասաւորներին՝ հետեւել Քրիստոսի ցուցմունքներին (հմտ. Յվհ 2, 5): Եւ կարող ենք երեւակայել, որ Մարիամը այդ նոյն դերը կատարել է նաեւ աշակերտների նկատմամբ, Յիսուսի Համբարձումից յետոյ, երբ նրանց հետ մնաց սպասելու Սուրբ Հոգու գալուստը եւ նրանց մխիթարեց նրանց առաջին առաքելութեան ընթացքում: Վարդարանի կողմից ներկայացուած տեսարանների միջով Մարիամի ընկերակցութեամբ անցնել՝ նշանակում է յաճախել Մարիամի «գալրոցը», Քրիստոսին ընթերցելու համար, Նրա գաղտնիքների խորքը ներթափանցելու համար, Նրա պատգամը հասկանալու համար:

Դպրոց - Մարիամի գալրոցը - այնքա՛ն աւելի արդիւնաւոր, եթէ մտածենք՝ որ Մարիամը դաստիարակի իր դերը կատարում է մեզ համար առատութեամբ ստանալով Սուրբ Հոգու պարգեւները եւ միաժամանակ առաջարկելով մեզ «հաւատքի ուխտագնացութեան»<sup>17</sup> օրինակը. ուխտագնացութիւն, որի անհամեմատելի փորձառութիւն ունեցող ուսուցչուհին է: Որդու խորհուրդներից իւրաքանչիւրի դիմաց, Մարիամը հրաւիրում է մեզ, ինչպէս Աւետման պահին, խոնարհութեամբ ներկայացնելու հարցումները՝ որոնք բացում են լոյսի դռները, միշտ հաւատքի հնազանդութեամբ եզրափակելու համար. «Տիրոջ աղախինն եմ, թող խօսքիդ համաձայն լինի ինձ» (Ղկա 1, 38):

## ՄԱՐԻԱՄԻ ՀԵՏ՝ ԿԵՐՊԱՐԱՆԱԿԻՑ ԼԻՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

15. Քրիստոնէական հոգեկանութիւնը որպէս իր որակաւորիչ բնութագրում ունի աշակերտի ջանքը՝ միշտ աւելի լիովին կերպարանակից դառնալու իր Ուսուցչին (հմտ. Հոմ 8, 29; Փլպ 3, 10.21): Սուրբ Հոգու հեղումը, որ տեղի է ունենում Մկրտութեան ժամանակ, հաւատացեալին որպէս ուռ պատուաստում է որթատունկին՝ որ է Քրիստոս (հմտ. Յվհ 15, 5), կարգում է անդամ Նրա խորհրդական Մարմնի (հմտ. 1Կր 12, 12; Հոմ 12, 5): Այս սկզբնական միութեանը, սակայն, պէտք է հետեւի Նրա հետ յարաճուն նմանակցութեան մի ընթացք, որ կարող լինի միշտ աւելի կողմնորոշելու աշակերտի վարքը Քրիստոսի «տրամաբանութեան» համաձայն. «Մնուցէք ձեր մէջ այն նոյն զգացումները, որ Քրիստոս Յիսուսի մէջ էին» (Փլպ 2, 5): Հարկաւոր է, Առաքեալի խօսքի համաձայն, «Քրիստոսով վերստին զգեստաւորուել» (հմտ. Հոմ 13, 14; Գղտ 3, 27):

Վարդարանի հոգեւոր ընթացքի մէջ - որ հիմնուած է Քրիստոսի դէմքի անդադար հայեցողութեան վրայ, Մարիամի ընկերակցութեամբ - Քրիստոսի հետ կերպարանակից դառնալու խստապահանջ գաղափարականը հետապնդում է շնորհիւ յաճախումի մի կերպի՝ որ կարող ենք կոչել «ընկերական»: Այն մեզ բնական կերպով առաջնորդում է Քրիստոսի կեանքից ներս եւ կարծես թէ «չնչել» է տալիս Նրա զգացումները: Սրա վերաբերեալ՝ երանելի Բարթոլոմէոսը ասում է. «Ինչպէս երկու ընկերներ, յաճախակի միմեանց այցելելով, ընդհանրապէս նոյնանում են նաեւ սովորութիւնների մէջ, այսպէս նաեւ մենք, Յիսուսի եւ Կոյսի հետ ընտանիօրէն զրուցելով, Վարդարանի Խորհուրդների շուրջ մտորելով եւ Հաղորդութեան շնորհիւ մէկ եւ միեւնոյն կեանք միասին կազմաւորելով, կարող ենք նմանուել նրանց, որքան

<sup>17</sup> Վատիկան. Բ. Համամիութ. Ժող., Եկեղեցու մասին Վարդ. Սահմ. *Lumen gentium* 58.

որ հնարաւոր է մեր ցածրութեանը, եւ այս գերագոյն բնօրինակներէից կարող ենք սովորել խոնարհ, աղքատ, ծածուկ, համբերատար եւ կատարեալ կեանքը»<sup>18</sup> :

Քրիստոսին կերպարանակից դառնալու այս ընթացքի մէջ, Վարդարանի աղօթքի ժամանակ, մենք մեզ յատուկ կերպով յանձնում ենք Սուրբ Կոյսի մայրական խնամքին: Նա, որ Քրիստոսի Մայրն է, մինչ ինքը նոյնպէս պատկանում է Եկեղեցուն, որպէս «պանծալի եւ ամբողջովին բացառիկ անգամ»<sup>19</sup>, միաժամանակ նաեւ «Եկեղեցու Մայրն» է: Որպէս այդպիսին, շարունակ որդիներ «է ծնում» Որդու խորհրդական Մարմինն: Այս գործը կատարում է բարեխօսութեամբ, նրանց համար հայցելով Հոգու անսպառելի հեղուժը: Մարիամը Եկեղեցու մայրն է՝ ինչպէս կատարեալ սրբապարկերն է:

Վարդարանը խորհրդական կերպով տեղափոխում է մեզ Մարիամի մօտ, որ յանձն է առել խնամել Քրիստոսի մարդկային աճը Նազարէթի տան մէջ: Սա նրան հնարաւորութիւն է տալիս դաստիարակելու եւ կազմաւորելու մեզ միեւնոյն հոգատարութեամբ, մինչեւ որ Քրիստոս «կը կազմուի» մեր մէջ լիովին (Հմմտ. Գղտ 4, 19): Մարիամի այս գործը - Քրիստոսի գործի վրայ ամբողջովին հիմնուած եւ նրանից արմատականօրէն կախումնաւոր - «նուազագոյն չափով անգամ խոչընդոտ չէ հաւատացեալների անմիջական միութեանը Քրիստոսի հետ, այլ՝ հեշտացնում է այն»<sup>20</sup>: Վատիկանեան Բ. Ժողովի կողմից արտայայտուած այս լուսաւոր սկզբունքի փորձառութիւնը այնքան ուժգին կերպով ունեցայ կեանքիս ընթացքում, այն դարձնելով եպիսկոպոսական նշանաբանիս հիմքը. *Totus tuus* (Ամէն բան քոնն է)<sup>21</sup>: Նշանաբան՝ որ, ինչպէս յայտնի է, ներշնչուած է սուրբ Լուի Մարի Գրինիոն դը Մոնֆորի ուսմունքից, որն այսպէս է բացատրում Մարիամի դերը Քրիստոսին կերպարանակից դառնալու մեզնից իւրաքանչիւրի գործընթացքում. «Մեր ամբողջ կատարելութիւնը կայանում է Քրիստոսի հետ կերպարանակից, Սրան միացած եւ նորոգած լինելու՝ մէջ: Հետեւաբար, բոլոր բարեպաշտութիւններից ամենակատարեալը անժխտելիօրէն այն է՝ որ մեզ ամենակատարեալ կերպով կերպարանակից է դարձնում, միաւորում եւ ընծայում է մեզ Յիսուս Քրիստոսին: Արդ, Մարիամը լինելով Յիսուս Քրիստոսին ամենակերպարանակից արարածը, հետեւում է՝ որ բոլոր բարեպաշտութիւնների շարքում այն՝ որ հոգին առաւել է ընծայում եւ կերպարանակից դարձնում մեր Տիրոջը, Մարիամի՝ Իր Ամենասրբուհի Մօր հանդէպ տաժած բարեպաշտութիւնն է, եւ որքան աւելի է հոգին ընծայում Մարիամին՝ այնքան աւելի է ընծայում Յիսուս Քրիստոսին»<sup>22</sup>: Բոլորից աւելի՝ Վարդարանի մէջ են Քրիստոսի կեանքը եւ Մարիամի կեանքը յայտնուած այսքան սերտօրէն միացած: Մարիամը ապրում է միմիայն Քրիստոսի համար եւ Քրիստոսի ծառայութեան մէջ:

## ՄԱՐԻԱՄԻ ՀԵՏ՝ ԱՂԱԶԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

16. Քրիստոս կոչ է ուղղում մեզ՝ Աստծուն դիմել յարատեւութեամբ եւ վստահութեամբ, որպէսզի մեր աղօթքները լսելի լինեն. «Խնդրեցէք եւ կը տրուի ձեզ. փնտռեցէք եւ կը գտնէք. բախեցէք եւ կը բացուի ձեր առաջ» (Մտթ 7, 7): Աղօթքի այս

<sup>18</sup> *I Quindici Sabati del Santissimo Rosario* (Ամենասուրբ Վարդարանի Տասնհինգ Շաբաթ օրերը), 27<sup>a</sup> ed., Pompei 1916, p. 27.

<sup>19</sup> Վատիկան. Բ. Համամիութ. Ժող., Եկեղեցու մասին Վարդ. Սահմ. *Lumen gentium* 53.

<sup>20</sup> Նոյն, 60.

<sup>21</sup> Հմմտ. *Primo radiomessaggio Urbi et orbi* (17 ottobre 1978) (Առաջին պատգամը ձայնասփիւռով. «Քաղաքին եւ տիեզերքին»): AAS 70 (1978), 927.

<sup>22</sup> *Trattato della vera devozione a Maria* (Մարիամի հանդէպ իրական բարեպաշտութիւնը), 120: *Opere*, 1, *Scritti spirituali*, Roma 1990, p. 430.

արդիւնաւէտութեան հիմքը Հօր բարութիւնն է, բայց նաեւ Հօր առջեւ ինքնին Քրիստոսի գործադրած միջնորդութիւնը (Հմմտ. 1Յվհ 2, 1) եւ Սուրբ Հոգու ներգործութիւնը, որ «մեզ համար միջնորդում է» Աստուծոյ ծրագրերի համաձայն (Հմմտ. Հռմ 8, 26-27): Մենք, յիրաւի, «եւ ոչ իսկ գիտենք՝ թէ ինչ է յարմար խնդրել» (Հռմ 8, 26) եւ երբեմն մեր աղօթքները պատասխան չեն ստանում՝ որովհետեւ «լաւ չենք խնդրում» (Հմմտ. Յկբ 4, 2-3):

Աղօթքին, որը Քրիստոս եւ Հոգին բխեցնում են մեր սրտից, զօրավիզ է կանգնում Մարիամը իր մայրական բարեխօսութեամբ: «Եկեղեցու աղօթքին զօրավիզ է կանգնում Մարիամի աղօթքը»<sup>23</sup>: Իրօք, եթէ Յիսուս, միակ Միջնորդը, մեր աղօթքի ձանապարհն է, Մարիամը, որ Յիսուսի ամբիժ հայելացումն է, մեր առջեւ մատնանշում է ձանապարհը, եւ «Սուրբ Հոգու ազդեցութեանը բերած Մարիամի այս եզակի համագործակցութիւնից մեկնելով է, որ Եկեղեցիները զարգացրել են Ամենասրբուհի Աստուածամօր ուղղուած աղօթքը, այն կենտրոնացնելով Քրիստոսի անձի վրայ, որ յայտնում է իր խորհուրդների մէջ»<sup>24</sup>: Կանայի հարսանիքին, Աւետարանը ակնյայտ է դարձնում Մարիամի բարեխօսութեան ճիշտ այս արդիւնաւէտութիւնը, որ իրեն Յիսուսի առջեւ պատգամաւոր է դարձնում՝ մարդկային կարօտութիւններին ի նպաստ. «Գինի չունեն» (Յվհ 2, 3):

Վարդարանը միաժամանակ խորհրդածութիւն է եւ աղաչանք: Աստուածամօր ուղղուած տեւական պաղատանքը յենում է վստահութեան վրայ՝ որ իր մայրական բարեխօսութիւնը ամէն բան կարող է ազդել Որդու սրտին: Մարիամը «շնորհով ամենակարող է»<sup>25</sup>, ինչպէս ասում էր երանելի Բարթոլոմէոսը իր «Սուրբ Վարդարանի Թագուհուն ուղղած Աղաչանք»-ում, մի համարձակ արտայայտութեամբ՝ որ հարկաւոր է իր ճիշտ իմաստով հասկանալ: Սա ստուգութիւն է, որ Աւետարանից մեկնելով՝ քրիստոնեայ ժողովրդի մէջ ամրապնդուել է փորձառութեան ճանապարհով: Դանթէ գերագանց բանաստեղծը այս ստուգութիւնը մեկնաբանում է հիանալի կերպով, սուրբ Բեռնարդոսի ուղիին հետեւելով, երբ երգում է. «Ո՛վ Կին, այնքա՛ն բարձրեալ ես եւ այնքա՛ն արժէքաւոր, որ եթէ մէկը շնորհ է հայցում եւ քեզ չի դիմում, առանց թեւերի սաւառնել է ուզում»<sup>26</sup>: Վարդարանի մէջ, Մարիամը՝ Սուրբ Հոգու սրբավայրը (Հմմտ. Ղկս 1, 35), մինչ աղաչանքներ է ընդունում մեզնից, մեզ համար կանգնում է Հօր առջեւ՝ որ իրեն լիացրել է շնորհներով եւ Որդու առջեւ՝ որ իր որովայնից է ծնուել, եւ աղօթում է մեր հետ եւ մեր համար:

## ՄԱՐԻԱՄԻ ՀԵՏ՝ ԱԻԵՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

17. Վարդարանը նաեւ խոր ուսումնասիրման եւ ասեպոմի ընթացք է, ուր Քրիստոսի խորհուրդը տեւապէս ներկայանում է քրիստոնէական փորձառութեան զանազան մակարդակներին: Բանաձեւը՝ աղօթական եւ հայեցողական ներկայացման բանաձեւն է, որ որպէս նպատակ ունի աշակերտի կազմաւորումը Քրիստոսի սրտի համաձայն:

<sup>23</sup> Catechismo della Chiesa Cattolica (Կաթողիկէ Եկեղեցու Քրիստոնէականը), 2679.

<sup>24</sup> Նոյն, 2675.

<sup>25</sup> «Սուրբ Վարդարանի Թագուհիին ուղղուած Աղաչանք»ը, որ հանդիսաւոր կերպով կը կատարուի տարին երկու անգամ, Մայիսին եւ Հոկտեմբերին, գրեր է երանելի Պարթոլոմէոսը 1883 թուականին, որպէս պատասխան՝ կաթողիկէ հաւատացեալներուն Լեւոն ԺԳ. Քահանայապետի կողմէ ուղղուած հրակէրի - Վարդարանի մասին գրած իր առաջին Կոնդակի մէջ - լծուելու հոգեւոր յանձնառութեան մը, դիմակայելու համար հասարակութեան չարիքներուն:

<sup>26</sup> Divina Commedia (Աստուածային Կատակերգութիւն), Paradiso (Դրախտ) XXXIII, 13-15.

Իսկապէս, եթէ Վարդարանի աղօթքի ժամանակ հարկ եղած ձեւով արժեւորուեն արդիւնաւէտ խորհրդածութեան համար անհրաժեշտ բոլոր տարրերը, նրանից կը ծնուի, յատկապէս ժողովրդապետութիւններում եւ սրբավայրերում կատարուած հասարակաց աղօթքի ընթացքում, «սոցողական յարկանշական պարեհութիւն», որ Հովիւները պէտք է կարողանան քաղել: Վարդարանի Տիրամայրը այս կերպով եւս շարունակում է Քրիստոսին աւետելու իր գործը: Վարդարանի պատմութիւնը ցոյց է տալիս՝ թէ ինչպէս այս աղօթքը գործածուել է յատկապէս Դոմինիքեանների կողմից, եկեղեցու համար դժուարին պահերին, հերետիկոսութեան տարածման պատճառով: Այսօր գտնւում ենք նոր մարտահրաւէրների առաջ: Ինչո՞ւ մեր ձեռքը չառնենք Վարդարանը մեր նախորդների հաւատքով: Վարդարանը պահում է իր ամբողջ զօրութիւնը եւ ամէն լաւագոյնս իրագործուած աւետարանումի հովուական պաշարի մէջ մնում է որպէս անզանցառելի միջոց:

## ԴԼՈՒԽ Բ.

# ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, ՏԻՐԱՄՕՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

### ՎԱՐՂԱՐԱՆԸ ՈՐՊԷՍ «ԱԻԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ»

18. Քրիստոսի ղեմքի հայեցողութեանը մօտենում ենք ունկնդրելով, Հոգու մէջ, Հօր ձայնը, որովհետեւ «ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթէ ոչ՝ Հայրը» (Մտթ 11, 27): Փրկիչական Կեսարիոյ մօտակայքում, ի պատասխան Պետրոսի հաւատքի դաւանութեան, Յիսուս ճշգրտում է իր ինքնութեան այսքան ջինջ յայտնատեսութեան ակունքը. «Ո՛չ մարմինը եւ ո՛չ էլ արիւնը յայտնեցին քեզ, այլ իմ Հայրը՝ որ երկնքում է» (Մտթ 16, 17): Անհրաժեշտ է, ուրեմն, ի վերուստ տրուած յայտնութիւնը: Բայց այն ընդունելու համար անհրաժեշտ է ունկնդրել. «Միմիայն Լո՛ւթեան եւ աղօթիչ փորձառո՛թինն է ընծայում յարմար հորիզոնը, ուր կարող է հասունանալ եւ զարգանալ այս խորհրդի ամենաիրական, ամենայարակից եւ ամենահետեւողական ճանաչողութիւնը»<sup>27</sup>:

Վարդարանը Քրիստոսի ղեմքի հայեցողութեանը յատկացուած քրիստոնէական աղօթքի աւանդական ուղիներից է: Այսպէս է այն նկարագրում Պօղոս Զ. Քահանայապետը. «Աւետարանական աղօթք լինելով, կենտրոնացած՝ փրկարար մարդեղութեան խորհրդի շուրջ, Վարդարանը, հետեւաբար, զուտ քրիստոսաբանական կողմնորոշում ունեցող աղօթք է: Իրօք, իր բնորոշ տարրը – ”Ողջոյն՝ չեղ, Մարիամ” բարեւի աղօթական կրկնութիւնը – նոյնպէս դառնում է Քրիստոսին ուղղուած անդադար փառաբանութիւն, ինչպէս Հրեշտակի բերած աւետիսի եւ Մկրտչի մօր տուած ողջոյնի վերջնակէտը. ”Օրհնեալ է որովայնիդ պտուղը” (Ղկս 1, 42): Կամենում եմ աւելին ասել. ”Ողջոյն՝ չեղ, Մարիամ”ի կրկնութիւնը կազմում է հիմնական թելերի միութիւնը, որի վրայ հիւստում ու զարգանում է խորհուրդների հայեցողութիւնը. Յիսուս, որ յիշում է իւրաքանչիւր ”Ողջոյն՝ չեղ, Մարիամ”ի մէջ, միեւնոյնն է՝ որ Վարդարանի խորհուրդների յաջորդութիւնը ներկայացնում է մեզ, հերթականութեամբ, Որդի Աստծոյ եւ Կոյսի»<sup>28</sup>:

### ՄԻ ՊԱՏԵՀ ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄ

19. Քրիստոսի կեանքի բազմաթիւ խորհուրդներից Վարդարանը, այնպէս՝ ինչպէս ամրապնդուել է եկեղեցական հեղինակութեան վաւերացումը ստացած իր ամենատարածուն ձեւի մէջ, մատնանշում է միայն մի քանիսը: Այդ ընտրութիւնը պարտադրուել է այս աղօթքի սկզբնական հիւստեւածքի պատճառով, որ կազմաւորուել է 150 թուի շուրջ, Սաղմոսների թուին համապատասխան:

<sup>27</sup> Յովհաննէս Պօղոս Բ., Առաք. Նամակ *Novo millennio ineunte* (6 gennaio 2001), 20: AAS 93 (2001), 279.

<sup>28</sup> Առաք. Յորդոր *Marialis cultus* (2 febbraio 1974), 46: AAS 66 (1974), 155.

Այնուամենայնիվ կարծում եմ՝ թէ Վարդարանի քրիստոսաբանական տարողութիւնը հզօրացնելու համար յարմար է մի ամբողջացում կատարել, որը անհատների եւ համայնքների ազատ արժեւորմանը յանձնուած լինելով հանդերձ՝ նրանց հնարաւորութիւնը կը տայ փարուելու Քրիստոսի նաեւ Բացայայտ կեանքի խորհուրդներին, Նրա Մկրտութեան եւ Խաչելութեան միջեւ գեղարվեստական ընթացքին: Այս խորհուրդների կատարման ժամանակամիջոցին է, յիրաւի, որ հայեցողութեամբ տեսնում ենք Քրիստոսի անձի ամենակարեւոր դիմագծերը, որպէս Աստուծոյ վերջնական յայտնիչ: Յիսուս նա է՝ որ, Յորդանանի մէջ Մկրտութեան պահին Հօր սիրեցեալ Որդի հռչակուելով, աւետում է Արքայութեան գալուստը, իր գործերով վկայում է այդ Արքայութեանը, հռչակում է այդ Արքայութեան օրէնքները: Բացայայտ կեանքի տարիներին է՝ որ Քրիստոսի խորհուրդը ներկայանում է ամբողջովին ի-րայարու-կ կերպով իբրեւ-լոյսի խորհուրդ. «Քանի դեռ աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ» (Յվհ 9, 5):

Հետեւաբար, որպէսզի Վարդարանը կարողանայ լիակատար կերպով կոչուել «Աւետարանի ամփոփում», յարմար է՝ որ Քրիստոսի մարդեղութեան եւ ծածուկ կեանքի խորհուրդների յիշատակումից յետոյ (Էրեւրանի խորհուրդները) եւ Խաչելութեան տառապանքների վրայ (Գառապանի խորհուրդները) եւ յարութեան յաղթանակի վրայ մտորելուց առաջ (Կաթի խորհուրդները), մեր խորհրդածութիւնը ուղղուի դէպի Յիսուսի բացայայտ կեանքի յատուկ կերպով նշանակալի պահերից մի քանիսին (լոյսի խորհուրդները): Նոր խորհուրդների այս յաւելումը - առանց այս աղօթքի աւանդական դասաւորման էական կերպարանքի հանդէպ որեւէ նախապաշարման - սահմանուած է այս աղօթքը քրիստոնէական հոգեկանութեան ծիրից ներս նորոգ հետաքրքրութեամբ ապրեցնելու, որպէս Քրիստոսի Սրտի խորութիւնների ճշմարիտ նախասրահ, որ մի վիճ է բերկրանքի եւ լոյսի, տառապանքի եւ փառքի:

## ԲԵՐԿՐԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

20. Առաջին մասի՝ «բերկրանքի խորհուրդներ»ի իրական բնութագրումն է ուրախութիւնը, որ շողարշակում է Մարգեղութեան իրադարձութիւնից: Սա աղնայայտ է Աւետումից իսկ սկսած, երբ Նազարէթի Կոյսին ուղղուած Գաբրիէլի ողջոյնը կապակցուած է մեսիական բերկրանքի հրաւերին. «Ուրախացի՛ր, Մարիամ»: Այս ողջոյնին է մօտենում - ինչպէս իր նաւամատոյցին - փրկութեան ամբողջ պատմութիւնը. մանաւանդ թէ, որոշակի կերպով, աշխարհի իսկ պատմութիւնը: Եթէ, իրօք, Հօր ծրագիրն է վերամիաւորել ամէն բան ի Քրիստոս (Հմմտ. Եփս 1, 10), ուրեմն ամբողջ տիեզերքն է՝ որ որոշակի կերպով ստացել է աստուածային բարեհաճութիւնը, որով Հայրը խոնարհուած է Մարիամի վրայ՝ դարձնելու համար նրան իր Որդու Մայրը: Իր հերթին, ամբողջ մարդկութիւնը կարծես բովանդակուած է այն «եղջի»ի մէջ, որով Մարիամը պատրաստակամօրէն պատասխանում է Աստուծոյ կամքին:

Յնձութեամբ լի է, ապա, Եղիսաբէթի հետ հանդիպման տեսարանը, ուր Մարիամի ձայնն ինքնին եւ իր որովայնից ներս Քրիստոսի ներկայութիւնը «ուրախութեամբ խայտալ են տալիս» Յովհաննէսին (Հմմտ. Ղկա 1, 44): Զուարթութեամբ գունագեղուած է Բեթղեհէմի տեսարանը, ուր աստուածային Մանկան՝ աշխարհի Փրկչի ծնունդը երգեցողութեան առարկան է հրեշտակների եւ հովիւներին աւետում է ճիշտ իբրեւ «մեծ ուրախութիւն» (Ղկա 2, 10):

Վերջին երկու խորհուրդները, սակայն, ուրախութեան համը պահելով հանդերձ, արդէն կանխում են եղերական նշանները: Տաճարին ներկայացումը, յիրաւի, մինչ

արտայայտում է ընծայման ուրախութիւնը եւ յափշտակութեան մէջ է ընկղմում Սիմէոն ծերունուն, արձանագրում է նաեւ մարգարէութիւնը «հակառակութեան նշան»ի՝ որ Մանուկը լինելու էր Իսրայէլի համար, եւ սրի՝ որ խոցելու էր Մօր հոգին (հմտ. Ղկս 2, 34-35): Ուրախալի եւ միաժամանակ վշտալի է նաեւ Տաճար այցելած տասներկուամեայ Յիսուսի դրուագը: Նա այստեղ յայտնուում է Իր աստուածային իմաստութեամբ, մինչ ունկնդրում է ու հարցումներ ներկայացնում, եւ հապէս՝ որպէս Նա որ «ուսուցանում է»: Իր խորհրդի յայտնութիւնը – որպէս Հօր գործերին ամբողջովին նուիրուած Որդի – աւետումն է աւետարանական այն արմատականութեան՝ որ ճգնաժամի է մատնում մարդու նաեւ ամենաթանկագին կապերը, Արքայութեան բացարձակ պահանջների դիմաց: Յովսէփը եւ Մարիամը, իրենք իսկ մտատանջ եւ անձկացած, «չհասկացան Նրա խօսքերը» (Ղկս 2, 50):

Այսպիսով, մտորել «բերկրանք»ի խորհուրդների շուրջ՝ նշանակում է մտնել քրիստոնէական բերկրանքի վերջին պատճառների եւ խոր իմաստի մէջ: Նշանակում է սեփական հայեացքը սեւեռել Մարդեղութեան խորհրդի թանձրացականութեան եւ փրկչական տառապանքների խորհրդի դժուարիմաց կանխաւետման վրայ: Մարիամը մեզ առաջնորդում է ըմբռնելու քրիստոնէական բերկրանքի գաղտնիքը, յիշեցնելով՝ որ քրիստոնէութիւնը նախեւառաջ «-էրարան» է, «բարի լուր», որ իր կենտրոնը, մանաւանդ թէ՛ իր ամբողջ պարունակութիւնը գտնում է յանձինս Քրիստոսի, մարմնացած Խօսքի, աշխարհի միակ Փրկչի:

## ԼՈՅՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

21. Մանկութիւնից եւ Նազարէթի կեանքից Յիսուսի բացայայտ կեանքին անցնելով, հայեցողութիւնը առաջնորդում է մեզ դէպի այն խորհուրդները՝ որ յատուկ տիտղոսով կարող են կոչուել «Լոյսի խորհուրդներ»: Իրականում, «Լոյսի խորհուրդներ» են՝ «Լոյսի խորհուրդներ»՝ որպէս իրականում, «Լոյսի խորհուրդներ» են՝ որպէս իրականում: Նա «աշխարհի լոյսն է» (Յվհ 8, 12): Այս իրողութիւնը իւրապատուկ կերպով ցայտուն է դառնում Բացայայտ կեանքի գրքին, երբ Նա հռչակում է Արքայութեան աւետարանը: Քրիստոնէայ հասարակութեան համար Քրիստոսի կեանքի այս շրջանից հինգ նշանակալի դրուագներ մատնանշել կամենալով – «լուսեղէն խորհուրդներ»ը – կարծում եմ՝ թէ դրանք կարող են բարեպատեհ կերպով զատորոշուել. 1) Յորդանանի մէջ Մկրտութիւնը. 2) Կանայի հարսանիքի ժամանակ կատարուած ինքնա-յայտնութիւնը. 3) Աստժոյ Արքայութեան աւետումը, դարձի գալու հրաւերով. 4) Պայծառակերպութիւնը եւ, ի վերջոյ, 5) Հաղորդութեան խորհրդի հաստատումը, որ խորհրդական արտայայտութիւնն է Զատկական Խորհրդի:

Այս խորհուրդներից իւրաքանչիւրը Արքայութեան յայտնութիւնն է, որ այլեւս հասել է յանձինս Յիսուսի: Լոյսի խորհուրդ է, նախեւառաջ, Յորդանանի մէջ Մկրտութիւնը: Այստեղ, մինչ Քրիստոս իջնում է գետի ջրերի մէջ, որպէս անմեղը՝ որ «մեղք» է դառնում մեր համար (հմտ. 2Կր 5, 21), երկինքը բացում է եւ Հօր ձայնը Նրան հռչակում է սիրեցեալ Որդի (հմտ. Մթս 3, 17), մինչ Սուրբ Հոգին իջնում է Նրա վրայ, յանձնելու համար Նրան սպասող առաքելութեան պաշտօնը: Լոյսի խորհուրդ է նշանների սկիզբը Կանայում (հմտ. Յվհ 2, 1-12), երբ Քրիստոս, ջուրը գինու փոխելով, աշակերտների սիրտը բացում է հաւատքի առաջ, շնորհիւ Մարիամի միջնորդութեան, որ հաւատացեալների առաջնեկն է: Լոյսի խորհուրդ է քարոզչութիւնը, որով Յիսուս աւետում է Աստժոյ Արքայութեան գալուստը եւ հրաւիրում է դարձի (հմտ. Մրկ 1, 15), ներելով մեղքերը նրանց՝ ովքեր Իրեն դիմում են խոնարհ վստահութեամբ (հմտ. Մրկ 2, 3-13; Ղկս 7, 47-48), որպէս սկիզբը

ողորմութեան պաշտօնի՝ որ Նա շարունակելու է կիրարկել մինչեւ աշխարհի վախճանը, յատկապէս ընդմէջ Ապաշխարութեան խորհրդի՝ որ վստահել է Իր Եկեղեցուն (Հմմտ. Յվհ 20, 22-23): Լոյսի խորհուրդ է, գերազանց կերպով, Պայծառակերպութիւնը, որ աւանդութեան համաձայն՝ տեղի է ունեցել Թաբոր Լեռան վրայ: Աստուածութեան փառքը փայլատակում է Քրիստոսի դէմքին, մինչ Հայրը յափշտակուած Առաքեալներին պատուիրում է հետեւել Նրան (Հմմտ. Ղկա 9, 35) եւ տրամադրուել ապրելու Նրա հետ Չարչարանքների վշտալի պահերը, Նրա հետ հասնելու համար Յարութեան զուարթութեանը եւ Սուրբ Հոգու մէջ կերպարանափոխուած կեանքին: Լոյսի խորհուրդ է, ի վերջոյ, Հաղորդութեան խորհրդի հաստատումը, ուր Քրիստոս դառնում է սնունդ, Իր Մարմնով եւ Իր Արեամբ, հացի եւ գինու նշանների ներքոյ, «մինչեւ ի սպառ» վկայելով մարդկութեան հանդէպ տաժած Իր սէրը (Յվհ 13, 1). մարդկութեան՝ որի փրկութեան համար ընծայելու էր Իր Անձը իբրեւ զոհ:

Այս խորհուրդներում, բացառութեամբ Կանայի հարսանիքի, Մարիամի ներկայութիւնը մնում է բեմաճարձակին խորհում: Աւետարանները հազիւ են ակնարկում նրա պատահական ներկայութիւններին՝ Յիսուսի քարոզչութեան այս կամ այն պահին (Հմմտ. Մրկ 3, 31-35; Յվհ 2, 12) եւ ոչինչ չեն ասում Հաղորդութեան հաստատման պահին Վերնատանը նրա հնարաւոր ներկայութեան մասին: Բայց պաշտօնը, որ Մարիամը կիրարկում է Կանայում, ընկերանում է, որոշակի կերպով, Քրիստոսի ամբողջ կեանքին: Յայտնութիւնը, որ Յորդանանի մէջ Մկրտութեան պահին տրւում է ուղղակի Հօր կողմից եւ արձագանքում է Մկրտչի խօսքերում, Կանայի հարսանիքին Մարիամի շուրթերին է եւ դառնում է նրա մայրական մեծագոյն յորդորը, որ նա ուղղում է բոլոր ժամանակների Եկեղեցուն. «Արէք այն՝ ինչ ձեզ ասում է» (Յվհ 2, 5): Սա մի յորդոր է, որ լաւագոյն նախաբանն է Քրիստոսի խօսքերի ու նշանների, Նրա բացայայտ կեանքի ընթացքում, կազմելով լոյսի բոլոր խորհուրդների մարեմական միջավայրը:

## ՏԱՌԱՊԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

22. Աւետարանները յատուկ կարեւորութիւն են տալիս Քրիստոսի տառապանքի խորհուրդներին: Քրիստոնէական բարեպաշտութիւնը միշտ, յատկապէս Քառասնորդաց շրջանին, «Ճանապարհ Խաչի» աղօթքի միջոցով, խորհրդածել է Չարչարանքների եւ Խաչելութեան պահերից իւրաքանչիւրի վրայ, զգալով՝ որ այստե՛ղ է «Իրոյ յայտնութեան Գագաթնակէտը եւ այստե՛ղ է մեր փրկութեան ակունքը: Վարդարանը ընտրում է Չարչարանքների եւ Խաչելութեան պահերից մի քանիսը, աղօթողին առաջնորդելով սրտի հայեացքը սեւեռել դրանց վրայ եւ վերապրել դրանք: Խորհրդածութիւնը սկիզբ է առնում Գեթսեմանիում, այնտեղ՝ ուր Քրիստոս ծանր տուայտանքների պահեր է ապրում Հօր կամքի դիմաց. կամք, որի դէմ մարմնի տկարութիւնը զգում է ապստամբելու փորձութիւնը: Այնտեղ Քրիստոս Իր Անձը դնում է մարդկութեան բոլոր փորձութիւնների տեղը եւ մարդկութեան բոլոր մեղքերի դիմաց, ասելու համար Հօրը. «Ո՛չ իմ, այլ Քո կամքը թող կատարուի» (Ղկա 22, 42): Իր այս «այո»ն հակառակն է Եդեմում նախածնողների արտասանած «ոչ»ի: Եւ թէ ի՛նչ գին էր վճարելու Հօր կամքին Իր այս յարումի պատճառով, յայտնի է դառնում յաջորդ խորհուրդներում, որոնց ընթացքում - Գողգոթայ բարձրանալը՝ գանակոծութեամբ, փշէ պսակով, խաչի վրայ մահուամբ - Նա նետում է ամենամեծ անարգութեան մէջ. «Ա՛հ մարդը»:

Այս անարգութեան մէջ յայտնուում է ո՛չ միայն Աստուծոյ սէրը, այլ նաեւ ինքնին մարդու իմաստը. «Ահա մարդը»: Ով կամենում է ճանաչել մարդուն, պէտք է ընդունակ լինի ճանաչելու մարդու իմաստը, արմատը եւ լրումը ի Քրիստոս, Աստուած՝ որ յանուն սիրոյ խոնարհուում է «մինչեւ մահ, եւ մահ խաչի» (Փլպ 2, 8): Տառապանքի խորհուրդները հաւատացեալին առաջնորդում են վերապրելու Յիսուսի մահը, կանգնելով ինչի ստորոտում, Մարիամի կողքին, մարդու հանդէպ տաճած Աստուծոյ սիրոյ անդունդներից ներս նրա հետ ներթափանցելու համար եւ զգալու համար այդ սիրոյ վերածնող ամբողջ զօրութիւնը:

## ՓԱՌԸԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

23. «Քրիստոսի դէմքի հայեցողութիւնը չի կարող վերջանալ ինչուա՞նք Քրիստոսի պատկերով: Նա Յարուցեալն է»<sup>29</sup>: Վարդարանը մշտապէս արտայայտում է հաւատքի այս գիտակցութիւնը, հաւատացեալներին հրաւիրելով անցնել Չարչարանքների եւ Խաչելութեան խաւարից այն կողմ, սեփական հայեացքը սեւեռելու համար Քրիստոսի Յարութեան եւ Համբարձման փառքի վրայ: Յարուցեալի հայեցողութեամբ՝ քրիստոնեան վերստին բացայայտում է իր Հասարակ յարձանաները (Հմմտ. 1Կր 15, 14), եւ կրկին ապրում է ուրախութիւնը ո՛չ միայն նրանց՝ որոնց Քրիստոս երեւաց - Առաքեալները, Մագդաղենացին, էմմաուսի աշակերտները -, այլ նաեւ Բերկրանէլ Մարիամի, որի ունեցած փորձառութիւնը նուազ սաստիկ չէր. փառաւորեալ Որդու նոր գոյութեան փորձառութիւնը: Այս փառքին, որ Համբարձումով բազմեցնում է Քրիստոսին Հօր աջ կողմում, Մարիամը նոյնպէս բարձրացում է Վերափոխումով, ամբողջովին յատուկ առանձնաշնորհութեամբ հասնելով կանխելու վախճանը՝ որ վերապահուած է բոլոր արդարներին, մարմնի յարութեամբ: Ի վերջոյ փառքով պսակուած - ինչպէս ներկայանում է փառքի վերջին խորհրդում - Մարիամը շողում է որպէս Հրեշտակների եւ Սրբերի Թագուհի, որպէս կանխումը եւ գազաթնակէտը Եկեղեցու վախճանաբանական վիճակի:

Որդու եւ Մօր փառքի այս ընթացքի կենտրոնում Վարդարանը տեղադրում է - փառքի երրորդ խորհրդում - Հոգեգալուստը, որ ցոյց է տալիս Եկեղեցու դէմքը որպէս Մարիամի շուրջը շրջապատում համախմբուած ընտանիք, կենսագործուած՝ Սուրբ Հոգու հօր հեղումով, պատրաստ՝ աւետարանումի առաքելութեանը: Փառքի խորհուրդներից ինչպէս միւսների՝ այնպէս էլ սրա հայեցողութիւնը պէտք է առաջնորդի հաւատացեալներին միշտ աւելի վառ գիտակցութեան՝ իրենց նոր գոյութեանն ի Քրիստոս, Եկեղեցու իրականութիւնից ներս. գոյութիւն՝ որի մեծ «սրբապատկեր»ն է Հոգեգալուստեան տեսարանը: Այսպիսով, փառքի խորհուրդները հաւատացեալների սրտում անուցում են վախճանաբանական նպասակակէտի յոյսը, դէպի ուր քայլում եւ ընթանում ենք որպէս Աստուծոյ ժողովրդի անդամներ, պանդուխտներ՝ պատմութեան ճանապարհներում: Այս իրականութիւնը չի կարող հաւատացեալներին չմղել դէպի քաջարի վկայութիւնը այն «հոգեգոլարթ աւետիսի», որ իմաստ է տալիս իրենց ամբողջ գոյութեանը:

<sup>29</sup> Յովհաննէս Պօղոս Բ., Առաք. Նամակ *Novo millennio ineunte* (6 gennaio 2001), 28: AAS 93 (2001), 284.

«ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ»ԻՑ ԴԵՊԻ «ԽՈՐՀՈՒՐԴ»Ը.  
ՄԱՐԻԱՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

24. Սուրբ Վարդարանի մէջ ներկայացուած խորհրդածուլթեան այս պարբերաշրջանները անշուշտ սպառիչ չեն, այլ ոգեկոչում են էականը, հաւատացեալին առաջնորդելով համտեսելու Քրիստոսի մասին այն ծանօթութիւնը, որ շարունակ սնուում է աւետարանական բնագրի ամբիժ ակունքից: Քրիստոսի կեանքի դրուագներէր իւրաքանչիւրը, այնպէս՝ ինչպէս պատմուած է Աւետարանիչներէ կողմից, իրենից ճառագայթում է այն Խորհուրդը՝ որ գերազանցում է ամէն ճանաչողութիւն (հմտ. Եփս 3, 19): Խորհուրդն է մարդացեալ Խօսքի, որի մէջ «մարմնեղէն կերպով բնակուում է աստուածութեան ամբողջ լիութիւնը» (Կղս 2, 9): Այս պատճառով է՝ որ **Սաբորալէ Եկեղեցոյ՝ Քրիստոսի** շատ է պնդում Քրիստոսի խորհուրդներէ վրայ, յիշեցնելով՝ որ «Յիսուսի կեանքում ամէն բան նշան է Իր Խորհրդի»<sup>30</sup>: Երրորդ Հազարամեակի Եկեղեցու «Գարաթէ Բայել»ը չափում է քրիստոնեաների կարողութեամբ՝ «թափանցելու Աստուծոյ խորհրդի կատարեալ ճանաչողութիւնից ներս, որ է Քրիստոս, որի մէջ ծածկուած են իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը» (Կղս 2, 2-3): Իւրաքանչիւր մկրտուածի ուղղուած է Եփեսացիներին հասցէագրուած Նամակի բոցավառ մաղթանքը. «Թող Քրիստոս բնակուի, շնորհիւ հաւատքի, ձեր սրտերում, եւ այսպիսով, սիրոյ մէջ արմատներ նետած եւ հիմնաւորուած, ընդունակ լինէք ... ճանաչելու Քրիստոսի սէրը, որ գերազանցում է ամէն ճանաչողութիւն, որպէսզի լիանաք Աստուծոյ ամբողջ լիութեամբ» (3, 17-19):

Վարդարանը ծառայում է այս գաղափարականին, շնորհելով «գաղտնիք»ը՝ առաւել դիւրութեամբ բացուելու Քրիստոսի խորին եւ պարփակիչ ճանաչողութեանը: Կարող ենք անուանել **Մարիամի ճանապարհը**: Ճանապարհն է օրինակի, որ մեզ տալիս է Նազարէթի Կոյսը՝ հաւատքի, լուծեան եւ ունկնդրումի կիւր: Միաժամանակ ճանապարհն է մարեմական բարեպաշտութեան, որ կենագործուած է գիտակցութեամբ այն անբաժանելի յարաբերութեան՝ որ Քրիստոսին միաւորում է Իր Ամենասրբուհի Մօրը. **Քրիստոսի Խորհուրդները** որոշակի կերպով նաեւ **Մօր Խորհուրդներն** են - մինչեւ իսկ երբ Մարիամը տուեալ դէպքերին ուղղակիօրէն մասնակից չէ - որովհետեւ Մարիամը ապրում է Քրիստոսով եւ Քրիստոսի համար: «Ողջոյն էեզ, Մարիամ»ի ընթացքում իւրացնելով Գաբրիէլ հրեշտակապետի եւ սրբուհի Եղիսաբէթի խօսքերը, մեզ մղուած ենք զգում միշտ նորոգ կերպով փնտռելու Մարիամի մէջ, նրա բազուկներէ եւ նրա սրտի մէջ, «նրա որովայնի օրհնեալ պտուղը» (հմտ. Ղկս 1, 42):

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ, ՄԱՐԴՈՒ «ԽՈՐՀՈՒՐԴ»Ը

25. 1978 թուականին Վարդարանի մասին տուած վկայութեանս մէջ, որ արդէն յիշեցինք եւ ուր այն դաւանեցի որպէս իմ նախասիրեալ աղօթքը, արտայայտել էի մի գաղափար՝ որին կ'ուզէի վերադառնալ: Յայնժամ ասել էի՝ որ «Վարդարանի պարզունակ աղօթքը բաբախում է մարդկային կեանքի ամանակով»<sup>31</sup>:

Քրիստոսի խորհուրդներէ շուրջ մինչեւ այժմ կատարուած խորհրդածուլթիւններէ լոյսի ներքոյ դժուարին չէ խորացնել Վարդարանի այս **մարդաբանական**

<sup>30</sup> Թիւ 515:

<sup>31</sup> Angelus (29 ottobre 1978): *Insegnamenti* I (1978), 76.

պարոնակութիւնը: Պարունակութիւնն առաւել արմատական՝ քան առաջին հայեացքից կարող է թուալ: Ով նուիրում է Քրիստոսի հայեցողութեանը, Նրա կեանքի հանգրուաններից կրկին անցնելով, չի կարող Նրանից չբաղել նաեւ մարդո՞վերաբերեալ ճշմարտութիւնը: Սա Վատիկանեան Բ. ժողովի մեծագոյն հաստատումն է, որ «Մարդո՞վերաբերեալ Փրկիչը» կոնգրակից սկսեալ՝ բազում անգամներ ուսուցումներիս առարկան դարձրեցի. «Իսկապէս, մարդու խորհուրդը ճշմարտութեամբ լուսաբանում է միմիայն մարդացեալ Խօսքի խորհրդի մէջ»<sup>32</sup>: Վարդարանն օգնում է բացուելու այս լոյսին: Քրիստոսի կեանքի ընթացքին հետեւելով, ուր, բացայայտուած եւ փրկագնուած, «բովանդակուած» է մարդու կեանքի ընթացքը<sup>33</sup>, հաւատացեալն իրեն գտնում է մարդու իրական պատկերի դիմաց: Հայեցողութեամբ դիտելով Քրիստոսի ծնունդին՝ հաւատացեալը սովորում է կեանքի սրբազան էութիւնը. դիտելով Նազարէթի տանը՝ սովորում է ընտանիքի վերաբերեալ սկզբնական ճշմարտութիւնը Աստուծոյ ծրագրի համաձայն. բացայայտ կեանքի խորհուրդներում Վարդապետի ուսուցումները լսելով՝ հայթայթում է Աստուծոյ Արքայութիւն մտնելու համար հարկաւոր լոյսը, իսկ Գողգոթայի ճանապարհին Նրան հետեւելով՝ սովորում է փրկարար տառապանքի իմաստը: Ի վերջոյ, Քրիստոսին եւ Իր Մօրը փառքի մէջ դիտելով, տեսնում է աւարտակէտը՝ ուր մեզնից իւրաքանչիւրը կանչուած է, եթէ իրեն յանձնի Սուրբ Հոգուց բժշկուելու եւ կերպարանափոխուելու: Այսպիսով կարող ենք ասել՝ որ Վարդարանի խորհուրդներից իւրաքանչիւրը, լաւ խորհրդածուած, լոյս է սփռում մարդու խորհրդի վրայ:

Միաժամանակ բնական է դառնում Փրկչի մարդկային սուրբ բնութեան հետ այս հանդիպումին տանել բոլոր խնդիրները, մտատանջութիւնները, յոգնութիւններն ու ծրագրերը, որ հետք են թողնում մեր կեանքի վրայ: «Տիրոջը յանձնիր սրտնեղութիւնդ եւ Ինքը զօրավիգ կը լինի քեզ» (Սղմ 55, 23): Խորհրդածել Վարդարանի հետ՝ նշանակում է Քրիստոսի եւ Իր Մօր գթառատ Սրտերին յանձնել մեր սրտնեղութիւնները: Քսանհինգ տարի յետոյ, վերյիշելով նեղութիւնները՝ որ չպակասեցին եւ ո՛չ իսկ պետրոսեան պաշտօնէութեան կիրարկման տարիներին, կամենում եմ հաստատել, գրեթէ որպէս բոլորին ուղղուած ջերմ հրաւէր՝ կատարելու այս իրականութեան վերաբերեալ անձնական փորձառութիւն. այո՛, Վարդարանը իսկապէս «բաբախում է մարդկային կեանքի ամանակով», այն աստուածային կեանքի ամանակին ներդաշնակեցնելու համար, Ամենասուրբ Երրորդութեան հետ բերկրալի հաղորդութեան մէջ, որ վախճանը եւ փափաքն է մեր գոյութեան:

<sup>32</sup> Հով. Սահմ. Ժամանակակից աշխարհի մէջ գտնուող եկեղեցու մասին *Gaudium et spes*, 22.

<sup>33</sup> Սբ. Երանոս Լիոնցի, *Contro le eresie* (Հերետիկոսութիւնների դէմ), III, 18, 1: PG 7, 932.

## ԴԼՈՒԽ Դ.

# ԻՆՉ ՀԱՄԱՐ ԿԵԼՆԲԸ ԲԻՒՍՏՈՍՆ Է

### ՎԱՐՂԱՐԱՆԸ ՈՐՊԷՍ ԽՈՐՀՐԴԻ ԻՒՐԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

26. Քրիստոսի խորհուրդների վրայ մտորումը Վարդարանի մէջ ներկայացուած է մի իւրօրինակ կերպով, որ իր բնութեամբ իսկ ընդունակ է նպաստելու այդ խորհուրդների իւրացմանը: Սա կրկնօրեան վրայ Հիմնօրէն կերպն է, որ նախեւառաջ վաւերական է «Ողջոյն չեզ, Մարիամ» բարեւի պարագային, որ իւրաքանչիւր խորհրդի ընթացքում կրկնուում է տասն անգամ: Եթէ այս կրկնութիւնը դիտենք մակերեսային կերպով, փորձութեան պիտի ենթարկուենք՝ համարելու Վարդարանը ցամաք ու ձանձրալի իրականութիւն: Ամբողջովին տարբեր համարում, սակայն, կարելի է ունենալ Վարդարանի նկատմամբ, եթէ այն քննարկենք որպէս բացայայտումը այն սիրոյ՝ որ յոգնութիւն չի զգում վերադառնալու սիրեցեալ անձին, արտայայտութիւններով՝ որոնք թէեւ միմեանց նման են իրենց արտաքին կերպարանքով, այնուամենայնիւ միշտ նոր են այն զգացումի պատճառով՝ որով համակուած են:

Յանձինս Քրիստոսի, Աստուած իսկապէս ձեռք է բերել «մարմնեղէն սիրտ»:  
Աստուած միմիայն աստուածային սիրտ չունի, հարուստ՝ ողորմութեամբ ու ներողամտութեամբ, այլ ունի նաեւ մարդկային սիրտ, ընդունակ՝ գորովի բոլոր թրթռացումներին: Եթէ այս հարցի վերաբերեալ կարիքն ունենայինք աւետարանական վկայութեան, դժուարին պիտի չլինէր գտնել այդ վկայութիւնը Յարութիւնից յետոյ Քրիստոսի եւ Պետրոսի յուզիչ երկխօսութեան մէջ. «Սիմոն Յովնանի, սիրո՞ւմ ես ինձ»: Հարցումը տրուած է երեք անգամ, երեք անգամ տրուած է պատասխանը. «Տէր, դու գիտես՝ որ սիրում եմ քեզ» (Հմմտ. Յվհ 21, 15-17): Աւետարանական այս հատուածի իւրայատուկ իմաստից այն կողմ - որ մեծապէս կարեւոր է Պետրոսի առաքելութեան համար - ոչ մէկի հայեացքից չի վրիպում այս եօթնօրեան կրկնութիւնը, ուր պնդող հարցումը եւ այդ հարցումին աւրնչուող պատասխանը արտայայտուում են մարդկային սիրոյ ընդհանուր փորձառութեանը քաջ ծանօթ եզրերով: Վարդարանը հասկանալու համար հարկաւոր է մտնել սիրոյն իւրայատուկ հոգեբանական շարժաբանութեան մէջ:

Մէկ բան յստակ է. թէեւ «Ողջոյն չեզ, Մարիամ»ի կրկնութիւնը անմիջականօրէն ուղղուած է Մարիամին, սակայն որպէս վերջին հասցէատէր՝ Յիսուսին է ուղղուած սիրոյ ներգործութիւնը, Մարիամի հետ եւ Մարիամի միջոցով: Կրկնութիւնը իր սնունդը առնում է Քրիստոսին միշտ աւելի լիովին կերպարանակից լինելու փափաքից, որ քրիստոնէական կեանքի իրական «ծրագիր»ն է: Պողոս Առաքեալը այս ծրագիրը հռչակում է կրակոտ խօսքերով. «Կեանքն ինձ համար Քրիստոսն է, իսկ մահը՝ շահ» (Փլպ 1, 21): Եւ դեռ. «Այլեւս ես չե՛մ որ ապրում եմ, այլ Քրիստոս ինքն է ապրում իմ մէջ» (Գղտ 2, 20): Վարդարանը մեզ օգնում է անելու այս կերպարանակցութեան մէջ, մինչեւ սրբութեան աւարտակէտը:

27. Փաստը, թէ Քրիստոսի հետ յարաբերութիւնը կարող է ընդունել մի գործելակերպի օգնութիւնը, չպէտք է զարմանք պատճառի: Աստուած մարդու հետ հաղորդակցուած է՝ յարգելով մեր բնութեան լինելու կերպը եւ նրա կենսական պարբերաշրջանները: Այս պատճառով, քրիստոնէական հոգեկանութիւնը, խորհրդագրացական լուծեան ամենավսեմ կերպերը ճանաչելով հանդերձ – լուծիւն, ուր բոլոր պատկերները, խօսքերն ու արարքները կարծես թէ գերազանցուած են Աստուծոյ հետ մարդու անձառելի միութեան սաստկութիւնից – սովորաբար յատկանշուած է անձի ամբողջական ներգրաւումով, նրա հոգե-մարմնական եւ հաղորդակցական բաղադրեալ իրականութեան մէջ:

Սա ակնյայտ կերպով տեսանելի է Ծեփ մէջ: Խորհուրդներն ու խորհրդանամանները կազմակերպուած են մի շարք արարողութիւններով, որոնք ներգրաւում են անձի տարբեր բաղադրամասերը: Ոչ-ծիսական աղօթքը նոյնպէս արտայայտում է միեւնոյն պահանջը: Սրա ապացոյցն է այն փաստը, որ Արեւելքում, քրիստոսաբանական խորհրդածութեան ամենայատկանշական աղօթքը – «Յիսուս, Քրիստոս, Աստուծոյ Որդի, Տէր, ողորմիր ինձ՝ մեղաւորիս» հայցողական խօսքերի վրայ կենտրոնացած աղօթքը<sup>34</sup> – աւանդաբար կապակցուած է շնչառութեան ամանակին, որ, մինչ նպաստում է աղաչանքի մէջ յարատեւութեանը, գրեթէ նիւթական թանձրութիւն է ապահովում փափաքին՝ որ Քրիստոս դառնայ կեանքի շնչառութիւնը, հոգին եւ «ամէն բան»ը:

... ՈՐՆ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՒ, ԿԱՐՈՂ Է ԲԱՐԵԼԱԽՈՒԵԼ

28. «Սկսող նոր Հապարամէակը» Առաքելական Նամակում յիշեցրի, որ այսօր Արեւմուտքում նոյնպէս կայ խորհրդաժողովեան նորոգ պահանջ, որ ուրիշ կրօններում երբեմն գտնուած է բաւական սիրաշահող ու գերեզմարող հանգամանքներ<sup>35</sup>: Սակաւաթիւ չեն քրիստոնեաները, որ քրիստոնէական հայցողական խորհրդածութեան վերաբերեալ ունեցած իրենց նուազագոյն ճանաչողութեան պատճառով՝ հրապուրւում են այդ առաջարկներով: Ուրիշ կրօնների խորհրդածական այդ առաջարկները, սակայն, քրիստոնէական փորձառութեան հետ երբեմն հաշտ եւ դրական տարրեր ունենալով հանդերձ՝ իրենց արտաքին կերպարանքի ներքոյ յաճախ թաքցնում են գաղափարախօսական անընդունելի խորք: Ոչ-քրիստոնէական այդ փորձառութիւնների մօտ նոյնպէս բաւական տարածուած է այն գործելակերպը, որ հոգեկան բարձր կենտրոնացման աւարտակէտին բաղձալով՝ կիրարկում է հոգե-մարմնական, կրկնողական եւ խորհրդաբանական բնոյթի միջոցներ: Վարդարանն իր տեղը զբաղեցնում է կրօնական երեւութաբանութեան այս ընդհանուր շրջանակից ներս, բայց բնութագրւում է իւրայատուկ նկարագրով, որը համապատասխանում է քրիստոնէական առանձնայատկութեանը բնորոշ կանոններին:

Գործնականում, խօսքը վերաբերւում է պարզապէս Հայեցողութեան մի կերպի: Որպէս կերպ, պէտք է գործածուի իր նպատակի հետ կապակցութեան մէջ եւ չի կարող դառնալ ինքն իր նպատակը: Այնուամենայնիւ, դարաւոր փորձառութեան արդիւնք լինելով, կերպը նոյնպէս չպէտք է թերագնահատուի: Սրան ի նպաստ գինուորագրուած է անթիւ ու անհամար Սրբերի փորձառութիւնը: Ինչը որ, սակայն, չի բացառում

<sup>34</sup> Catechismo della Chiesa Cattolica, 2616.

<sup>35</sup> Հմմտ. թիւ 33: AAS 93 (2001), 289.

կերպի բարելավման հնարաւորութիւնը: Ճիշտ այս նպատակին է ձգտում Վարդարանի խորհուրդների շարքին լոյսի խորհուրդների նոր շարքի յաւելումը, աղօթքի արտասանութեանը վերաբերող որոշ թելադրանքների հետ միասին, որոնք առաջարկում եմ այս նամակում: Սրանցով, այս աղօթքի լայնածաւալ կերպով ամրապնդուած կառոյցը յարգելով հանդերձ, կամենում եմ օգնել հաւատացեալներին՝ ըմբռնելու Վարդարանի այլաբանական բովանդակութիւնն ու տեսանկիւնները, ամէնօրեայ կեանքի պահանջների հետ ներդաշնակութեան մէջ: Առանց սրա, ներկայ է վտանգը՝ որ Վարդարանը ոչ միայն չարտադրի հոգեւոր յուսացուած արդիւնքները, այլ մինչեւ իսկ պսակը, որով սովոր ենք աղօթել Վարդարանը, վերջիվերջոյ համարուի հմայիլ կամ մոգական առարկայ, Վարդարանի իմաստի եւ գործածումի արմատական խեղաթիւրումով:

## ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

29. Յայտարարել խորհուրդը եւ միաժամանակ ունենալ այդ խորհուրդը ներկայացնող սրբապատկերի վրայ սեփական հայեացքը սեւեռելու հնարաւորութիւնը, նման է Բեմաճարձակ Բայելուն, դէպի ուր հնարաւոր է կենտրոնացնել մեր ուշադրութիւնը: Խօսքերը առաջնորդում են երեւակայութիւնն ու հոգին դէպի Քրիստոսի կեանքի տուեալ դրուագը կամ պահը: Եկեղեցու ներսում զարգացում ապրած հոգեկանութեան մէջ, ինչպէս սրբապատկերների նկատմամբ մեծարանքը, այնպէս էլ զգայարանները ներգրաւող տարրերով հարուստ բազմաթիւ բարեպաշտութիւնները, ինչպէս նաեւ Հոգեւոր Վարժումներում սուրբ Իգնատիոս Լոյոլայի առաջարկած կերպը, գործածում են տեսողական եւ երեւակայական տարրը (Գեղանկի վերահասկում-իւնը), համարելով այն մեծ օգնութիւն, նպաստող՝ խորհրդի շուրջ հոգու կենտրոնացումին: Սա մի կերպ է, նաեւ, որ Համապապասխանում է ինձինն Մարգերիտ-Իւան Գրամաբան-Իւանը. Աստուած, յանձինս Յիսուսի, կամեցաւ մարդկային դիմագծեր առնել: Յիսուսի մարմնեղէն իրականութեան միջոցով է՝ որ մենք առաջնորդուում ենք Նրա աստուածային խորհրդի հետ հաղորդակցութեան:

Թանճրացականութեան, շօշափելիութեան, զգայարաններով ըմբռնելի լինելու այս պահանջին նոյնպէս պատասխանում է Վարդարանի զանազան խորհուրդների յայտարարութիւնը: Անշուշտ, Վարդարանի խորհուրդները չեն փոխարինում Աւետարանին եւ ո՛չ իսկ յիշեցնում են Աւետարանի բոլոր էջերը: Վարդարանը, ուստի, չի փոխարինում «lectio divina»-ին (Աստուածաշնչի ընթերցանութեանը), այլ ընդհակառակն՝ նեցուկ է կանգնում նրան եւ նպաստում է նրա տարածմանը: Եւ թէեւ Վարդարանի մէջ ոգեկոչող խորհուրդները, նաեւ լոյսի խորհուրդները լրացումով, սահմանափակում են Քրիստոսի կեանքի հիմնական դրուագներով, նրանց մեկնակէտից հոգին դիւրութեամբ կարող է սաւառնել Աւետարանի մնացած դէպքերի եւ ուսուցումների վրայ, յատկապէս՝ երբ Վարդարանի աղօթքը կատարուում է երկարատեւ ամփոփումի իւրայատուկ ժամանակահատուածների ընթացքին:

## ԱՍՏԾՈՅ ԽՕՍՔԻ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ

30. Խորհրդածութեանը աստուածաշնչեան հիմք եւ առաւել խորութիւն հաղորդելու նպատակով, օգտակար է՝ որ խորհրդի յայտարարութեանը հետեւի աստուածաշնչեան մի Համապապասխան Հաստատութի ընթերցումը, որը պարագաների համաձայն կարող է առաւել կամ նուազ ընդարձակ լինել: Ուրիշ խօսքեր, իրօք, երբեք չեն հասնի ունենալու աստուածային ներշնչումով արտաբերուած խօսքերի արդիւնաւէտութիւնը:

Աստուածաշնչի խօսքերը պէտք է ունկնդրել համոզումով՝ որ Աստուծոյ Խօսքն են, այսօրուայ համար եւ «ինձ համար» արտասանուած:

Այսպէս ընդունուելով, Աստուածաշունչը Վարդարանի կրկնողական մանկավարժութիւնից ներս մուտք է գործում առանց պատճառելու այն ձանձրոյթը, որ պիտի առաջանար սոսկ լրատուութեան պարագային, որին արդէն իսկ քաջ տեղեակ ենք: Ո՛չ, խօսքը չի վերաբերում մարդկանց յիշողութեան մէջ ինչ որ մի տեղեկութիւն վերարթնացնելուն, այլ Խոնարհ՝ որ «Խօսի» Աստուծոյ: Հանդիսաւոր եւ հասարակաց առիթների՝ այս ընթերցումը կարող է պատշաճ կերպով լուսաբանուել համառօտ մեկնաբանութիւնով:

## ԼՌՈՒԹԻՒՆԸ

31. Լուսնի-նն է ունկնդրումի եւ խորհրդածոթեան սնունդը: Բարենպաստ է, որ խորհրդի յայտարարութիւնից եւ Խօսքի ընթերցումից յետոյ՝ մի յարմար ժամանակահատուածով դադար առնենք, սեւեռելու համար մեր հայեացքը քննարկուած խորհրդի վրայ, բարձրաձայն աղօթքը սկսելուց առաջ: Լուսնի-նն արժէքի վերստին բացայայտումը՝ հայեցողութեան եւ խորհրդածոթեան գործադրման գաղտնիքներից մէկն է: Գործիքաշինութեան արտադրանքներով եւ հաղորդամիջոցներով գերյագեցած հասարակութեան սահմաններից ներս ներկայ է նաեւ փաստը՝ որ լուսնի-ննը միշտ աւելի դժուարին է գտնել: Ինչպէս Ծէսի ընթացքում խրախուսուած են լուսնի-ննի պահերը, նաեւ Վարդարանի աղօթքի ժամանակ, Աստուծոյ Խօսքի ունկնդրումից յետոյ, պատշաճ է մի կարճատեւ ընդմիջման ներածումը, մինչ հոգին կը կենտրոնանայ տուեալ խորհրդի բովանդակութեան վրայ:

## «ՀԱՅՐ ՄԵՐ»Ը

32. Խօսքի ունկնդրումից եւ խորհրդի կիզակէտը ճշտելուց յետոյ, բնական է՝ որ հոգին Բարձրանայ գեղի Հայրը: Յիսուս, Իր խորհուրդներից իւրաքանչիւրի միջոցով, միշտ առաջնորդում է մեզ դէպի Հայրը, որին ինքն էլ տեւապէս դիմում է, որովհետեւ նրա «գրկում» է հանգչում (հմտ. Յվհ 1, 18): Յիսուս կամենում է մեզ մասնակից դարձնել Հօր հետ ունեցած Իր մտերմութեանը, որպէսզի Իր հետ ասենք. «Աբբա, Հայր» (Հոմ 8, 15; Գղտ 4, 6): Հօր հետ յարաբերութեան մէջ է՝ որ Յիսուս մեզ դարձնում է Իր եղբայրները եւ եղբայրները մէկս միւսի, հաղորդելով մեզ Հոգին՝ որ միաժամանակ Իր Հոգին է եւ Հօր Հոգին: «Հայր մեր»ը, «Ողջոյն էեզ, Մարիամ»ի կրկնութեան ընթացքում ծաւալուած քրիստոսաբանական-մարեմաբանական խորհրդածոթեանը կարծես իբրեւ հիմք դրուած, խորհրդի շուրջ մտորումը դարձնում է եկեղեցային փորձառութիւն, նաեւ երբ կատարուած է միայնութեան մէջ:

## ՏԱՍԸ «ՈՂՋՈՅՆ»ՆԵՐԸ

33. Սա է Վարդարանի ամենաընդարձակ տարրը, ինչպէս նաեւ տարրը՝ որով Վարդարանը դառնում է մարեմական գերագոյն աղօթքը: Բայց լաւ հասկացուած «Ողջոյն էեզ, Մարիամ»ի լոյսի ներքոյ է ճիշտ, որ յստակօրէն նկատում ենք՝ թէ ինչպէս մարեմական նկարագիրը ո՛չ միայն հակառակ չէ քրիստոսաբանական նկարագրին, այլ մանաւանդ թէ՛ ընդգծում է այն եւ ցայտուն դարձնում: «Ողջոյն էեզ, Մարիամ»ի առաջին մասը, իրօք, Գաբրիէլ Հրեշտակապետի եւ սրբուհի Եղիսաբէթի կողմից

Մարիամին ուղղուած խօսքերից քաղուած, պաշտողական հայեցողութիւնն է խորհրդի՝ որ իրականանում է Նազարէթի Կոյսի որովայնում: Արտայայտում է այսպէս ասած երկնքի ու երկրի հիացումը եւ որոշակի իմաստով տեսանելի է դարձնում Ինքնին Աստուծոյ զմայլանքը՝ երբ դիտում է Իր գլուխգործոցը – Որդու մարդեղութիւնը Մարիամի կուսական արգանդում – նման՝ Ծննդոց գրքում նկարագրուած բերկրալի հայեացքին (Հմմտ. Ծնդ 1, 31), այն սկզբնական «յո-զմո-նէին, որով Աստուած, արարչագործութեան արշալոյսին, դիտեց Իր ձեռքերի գործը»<sup>36</sup>: Վարդարանի մէջ, «Ողջոյն լէզ, Մարիամ»ի կրկնութիւնը մեզ դնում է ներդաշնակութեան մէջ՝ Աստուծոյ հետ հանդիպման ալիքի վրայ. բերկրանք է, ապշանք, ճանաչումն է պատմութեան ամենամեծ հրաշքի: Մարիամի մարգարէութեան կատարումն է. «Այսուհետեւ բոլոր սերունդները երանուհի են կոչելու ինձ» (Ղկս 1, 48):

«Ողջոյն լէզ, Մարիամ»ի յենակէտը, կարծես հանգոյցը լինէր առաջին եւ երկրորդ մասերի միջեւ, Յիսուսի անունն է: Երբեմն, հապճեպ աղօթքի ժամանակ, տեսողութիւնից վրիպում է այս յենակէտը եւ իր հետ՝ նաեւ հայեցողութեան առարկան հանդիսացող Քրիստոսի խորհրդի հետ կապակցութիւնը: Բայց ճիշտ Յիսուսի անուան եւ Յիսուսի խորհրդի վրայ դրուած շեշտով է՝ որ յատկանշուած է Վարդարանի իմաստալից եւ պտղաբեր արտասանութիւնը: Պողոս Զ-ը արդէն յիշեցնում էր, «Մարեմական Բարեպաշտութիւն» Առաքելական Յորդորի մէջ, Քրիստոսի անուանը ցայտունութիւն տալու սովորութիւնը, որ գործադրուած է որոշ գաւառներում, կցելով տուեալ խորհուրդը վերակոչող մի վերջամաս<sup>37</sup>: Գովելի սովորութիւնն է սա, յատկապէս հասարակաց աղօթքի պարագային. ուժգին կերպով արտայայտում է քրիստոսաբանական հաւատքը, Փրկչի կեանքի տարբեր դրուագներին պատշաճեցում: Հասարակ գաւառներն է եւ, միաժամանակ, խորհրդածութիւնը արթուն պահելու օգնութիւն, թոյլատրելով ապրել Քրիստոսի խորհրդին առնչուող եւ նրան կերպարանակից դարձնող պաշտօնը, որ ներկայ է «Ողջոյն լէզ, Մարիամ»ի կրկնութեան մէջ: Կրկնել Յիսուսի անունը – միակ անունը, որի մէջ տրուած է մեզ յուսալ փրկութիւնը (Հմմտ. Գրծ 4, 12), Ամենասրբուհի Մօր անուան հետ հիւսուած, եւ գրեթէ թողնելով՝ որ Մարիամն Ինքը յուշի մեզ Յիսուսի անունը – կազմում է կերպարանակցութեան մի ընթացք, որն իբրեւ նպատակ ունի միշտ աւելի խոր կերպով թափանցել Քրիստոսի կեանքից ներս:

Քրիստոսի հետ ունեցած ամբողջովին իւրօրինակ յարաբերութիւնից – յարաբերութիւն, որով Մարիամը դառնում է Աստուածածին, Theotòkos – բխում է, ապա, խնդրանքի ուժը, որով Մարիամին դիմում ենք աղօթքի երկրորդ մասում, իր մայրական բարեխօսութեանը վստահելով մեր կեանքը եւ մեր մահուան ժամը:

## «ՓԱՌՔ ՀՕՐ ...»Ը

34. Ամենասուրբ Երրորդութեանն ուղղուած փառատրութիւնը քրիստոնէական հայեցողութեան աւարտակէտն է: Քրիստոս, իրօք, ճանապարհն է՝ որ առաջնորդում է

<sup>36</sup> Յովհաննէս Պողոս Բ., Lettera agli artisti (4 aprile 1999) (Նամակ արուեստագէտներին), 1: AAS 91 (1999), 1155.

<sup>37</sup> Հմմտ. թիւ 46: AAS 66 (1974), 155. Այս սովորութիւնը վերջերս գովասանքի արժանացաւ նաեւ Աստուածային Պաշտամունքի եւ Խորհուրդների Կանոնակարգի Ժողովի «Արարչա-որո-նէն Ժողովրդական Բարեպաշտութիւնների Եւ Ծէսի: Ակզմո-նէներ Եւ Կո-զմո-նէներ» փաստաթղթում: *Direttorio su pietà popolare e liturgia. Principi e orientamenti* (17 dicembre 2001), 201, Città del Vaticano, 2002, p. 165.

մեզ դէպի Հայրը, Սուրբ Հոգու մէջ: Եթէ մինչեւ խորքը ընթանանք այս ճանապարհով, մեր դիմաց մշտապէս կը գտնենք աստուածային երեք Անձերի խորհուրդը, որոնց ուղղում ենք մեր փառատրութիւնը, երկրպագութիւնը, երախտագիտութիւնը: Կարելոր է այս հանգամանքը, որ «Փառէ Հօր ...»ը՝ Հայեցողութեան Գաղափարակիր Վարդարանում լաւագոյնս ակնբախ տեղադրութեան մէջ է: Հասարակաց աղօթքի ժամանակ այն կարելի է երգեցողութեամբ կատարել, քրիստոնէական բոլոր աղօթքների այս կառուցուածքային եւ որակաւորիչ եզրափակմանը պատշաճ հանդիսաւորութիւն հաղորդելու համար:

Որքան որ խորհրդի շուրջ մտածումը - Ողջոյնից Ողջոյն - ուշադիր է, խորին, Քրիստոսի եւ Մարիամի սիրով կենսագործուած, իւրաքանչիւր տասը Ողջոյնից յետոյ Ամենասուրբ Երրորդութեանն ուղղուած փառատրութիւնը, արագ փակումի վերածուելուց հետո, ստանում է հայեցողական իր իրական երանգաւորումը, կարծես բարձրացնելու համար հոգին մինչեւ Դրախտի բարձրութիւնը եւ վերապրել տալու համար մեզ, որոշակի կերպով, Թաքոր լեռան փորձառութիւնը, որ կանխումն է գալիք հայեցողութեան. «Լաւ է մեզ այստեղ լինել» (Ղկս 9, 33):

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՂԹԱՆՔԸ

35. Վարդարանի ընթացիկ կիրարկման ժամանակ, Ամենասուրբ Երրորդութեանն ուղղուած փառատրութեանը հետեւում է մի մաղթանք, որ իւրաքանչիւր խմբի մօտ տարբեր է սովորութիւնների համաձայն: Առանց այս մաղթանքների արժէքից ինչ որ մի բան պակասեցնելու, յարմար է ինձ թւում նշել՝ որ խորհուրդների հայեցողութիւնը կարող է աւելի լաւ արտայայտել իր արգասաւորութիւնը, եթէ աղօթողները հոգատարութիւնն ունենան իւրաքանչիւր խորհուրդը եզրափակելու մի «ղօթիւն»՝ որ նպաստակաւորութեամբ լինի խորհրդի շուրջ մտածման իրապարակ պրոցեսը: Այսպիսով, Վարդարանը աւելի արդիւնաւէտութեամբ կարող է արտայայտել քրիստոնէական կեանքի հետ ունեցած իր կապը: Սա այն է՝ ինչ թելադրում է հետեւեալ գեղեցիկ ծիսական աղօթքը, որը մեզ հրաւիրում է խնդրելու՝ Վարդարանի խորհուրդների շուրջ մտորելով կարողանալ հասնել «նմանուելու նրա պարունակած իրականութիւններին եւ ստանալու այն՝ ինչ դրանք խոստանում են»<sup>38</sup>:

Եզրափակիչ այս մաղթանքը կարող է, ինչպէս արդէն գործնականում պատահում է, ունենալ մի օրինաւոր գանազանութիւն: Վարդարանն այդպիսով կարող է ստանալ հոգեւոր տարբեր աւանդութիւնների եւ քրիստոնէայ տարբեր համայնքների հետ առաւել համեմատական կերպարանք: Այս հեռանկարով, բաղձալի է՝ որ հովուական պէտք եղած կշռադատութիւնից եւ Վարդարանի աղօթքին յատուկ կերպով ուշադիր մարեմական կենտրոններում ու սրբավայրերում նախապէս փորձարկուելուց յետոյ՝ տարածուեն ամենանշանակալի առաջարկները, այնպէս՝ որ Աստուծոյ ժողովուրդը կարողանայ, սեփական հայեցողութեան համար սնունդ հայթայթելով, նպաստ քաղել հոգեւոր բոլոր վաւերական հարստութիւններից:

<sup>38</sup> «... concede, quaesumus, ut haec mysteria sacratissimo beatae Mariae Virginis Rosario recolentes, et imitemur quod continent, et quod promittunt assequamur»: Missale Romanum 1960, In festo B.M. Virginis a Rosario. (Հոռոմէական Պատարագամատոյց, Վարդարանի Տիրամօր տօնի աղօթքից):

36. Վարդարանի աղօթքը կատարելու աւանդական գործիքը պսակն է: Մակերեսային գործածութեան պարագային, պսակը յաճախ վերածուում է սոսկ հաշուարկման գործիքի, թուարկելու համար Ողջոյնների յաջորդումը: Պսակը, մինչդեռ, ներկայանում է նաեւ արտայայտելու մի այլաբանութիւն, որը կարող է մի վերջին տարողութիւն հաղորդել հայեցողութեանը:

Այս ուղղութեամբ նկատելիք առաջին իրողութիւնն այն է՝ որ պսակը չփոխւում է Կրիստոսի անձնում է կենտրոնանում հաւատացեալների կեանքն ու աղօթքը: Ամէն բան մեկնում է Նրանից, ամէն բան ձգտում է Նրան, ամէն բան, Նրա միջոցով, Սուրբ Հոգու մէջ, հասնում է Հօրը:

Որպէս հաշուարկման գործիք, որ ցոյց է տալիս աղօթքի առաջընթացքը, պսակը յիշեցնում է քրիստոնէական հայեցողութեան եւ կատարելութեան անդադար ուղեւորութիւնը: Երանելի Բարթոլոմէոս Լոնգոն պսակը տեսնում էր նաեւ որպէս «շղթայ», որը մեզ կապում է Աստծուն: Շղթայ է, այո՛, բայց քաղցր շղթայ. միշտ իբրեւ այսպիսին է ներկայանում յարաբերութիւնը Աստծոյ հետ՝ որ Հայր է: «Որդիական» շղթայ, որը մեզ ներդաշնակութեան մէջ է դնում Մարիամի՝ «Տիրոջ աղախին»ի հետ (ՂԿ 1, 38), եւ, ի վերջոյ, Ինքնին Քրիստոսի հետ, որն Աստուած լինելով հանդերձ՝ «ծառայ» դարձաւ յանուն մեր հանդէպ տաճած Իր սիրոյ (Փլպ 2, 7):

Հաճելի է պսակի այլաբանական իմաստը տարածել նաեւ մեր փոխադարձ յարաբերութիւնների վրայ, նրանով յիշելով հաղորդութեան եւ եղբայրութեան զօրը՝ որ մեզ բոլորիս միաւորում է ի Քրիստոս:

### ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐՁԱԻՈՐՈՒԹԵԱՆ

37. Ըստ ընթացիկ կիրարկման, եկեղեցային զանազան միջավայրերում տարբեր է Վարդարանը սկսելու կերպը: Որոշ դաւաններում սովոր են սկսել 69րդ Սաղմոսի աղօթքով. «Ո՛վ Աստուած, ե՛կ եւ փրկի՛ր ինձ. Տէ՛ր, շուտով օգնութեան հասի՛ր ինձ», կարծես աղօթողի մտքում ամրապնդելու համար սեփական անուժութեան գիտակցութիւնը: Այլուր, մինչդեռ, Վարդարանի սկզբնաւորութեան կարգում են հասարակէրը, կարծես հաւատքի դաւանութիւնը դնելու համար հայեցողական այս սկստող ընթացքի հիմքին: Այս եւ նմանօրինակ սովորութիւնները հաւասարապէս օրինաւոր են, այն չափով՝ որքանով լաւ են հայեցողութեան տրամադրում հոգին: Վարդարանն, ապա, աւարտում է Քահանայապետի գիտաւորութիւնների համար կատարուած աղօթքով, աղօթողի հայեցքը ընդարձակելու համար եկեղեցային կարիքների լայնատարած հորիզոնին: Վարդարանի այս եկեղեցային ինքնութիւնը խրախուսելու համար է ճիշտ, որ Եկեղեցին այն կամեցաւ հարստացնել «սուրբ ներողութիւն»ներով, որոնք սահմանուած են Վարդարանը պէտք եղած հոգեւոր տրամադրութեամբ աղօթողներին:

Յիրաւի, այսպէ՛ս ապրուելու պարագային՝ Վարդարանը դառնում է իրական հոգեւոր ուղեւորութիւն, ուր Մարիամը ներկայանում է որպէս մայր, ուսուցչուհի, առաջնորդ, եւ հաւատացեալին զօրավիգ է կանգնում իր հզօր բարեխօսութեամբ: Զարմանալի չէ, ուրեմն, որ այս աղօթքի վերջաւորութեան – աղօթք, որի միջոցով ներանձնական փորձառութիւնն է ունեցել Մարիամի մայրութեան – հոգին զգում է

Սուրբ Կոյսին գովաբանելու կարիքը, լինի «Ողջ Լեւ» Թագուհի» հիանալի աղօթքով, լինի Լորենտեան Մաղթանկներով: Այս գովաբանութիւնը թագադրումն է ներանձնական այս ուղեւորութեան, որը հաւատացեալին առաջնորդեց կենդանի շփում ունենալու Քրիստոսի եւ Իր Ամենասրբուհի Մօր խորհուրդի հետ:

## ԺԱՄԱՆԱԿԻ ՄԷՁ ԲԱՇԽՈՒՄԸ

38. Վարդարանի աղօթքը կարելի է ամէն օր ամբողջովին կատարել, եւ կան հաւատացեալներ՝ որ վարւում են այդպէս, ինչը որ գովասանքի արժանի է: Վարդարանն այսպիսով գալիս է աղօթքով յագեցնելու բազմաթիւ հայեցողականների ժամանակը, կամ էլ հիւանդներին ու տարեցներին ընկերակցելու, որոնք իրենց տրամադրութեան ներքոյ առատ ժամանակ ունեն: Բայց ակնյայտ է - եւ սա առաւել եւս իրաւացի է՝ եթէ յաւելում ենք լոյսի Խորհուրդներին նոր շարքը - որ հաւատացեալներից շատերը չեն կարող աղօթել ամբողջ Վարդարանը, այլ նրա միայն մէկ մասը, շաբաթական որոշակի հերթականութեան համաձայն: Շաբաթական այս բաշխումը կարող է հոգեւոր որոշակի «գոյն» հաղորդել շաբաթուայ զանազան օրերին, նման Ծէսի միջոցով կատարուածին՝ որն իմաստ է հաղորդում ծիսական տարուայ զանազան շրջաններին:

Ընթացիկ կիրարման համաձայն, երկուշաբթին եւ հինգշաբթին նուիրուած են «բերկրանքի խորհուրդներ»ին, երեքշաբթին եւ ուրբաթը՝ «տառապանքի խորհուրդներ»ին, չորեքշաբթին, շաբաթը եւ կիրակին՝ «փառքի խորհուրդներ»ին: Ո՛ր կարող ենք ներմուծել «լոյսի խորհուրդներ»ը: Հաշուի առնելով, որ փառքի խորհուրդները ներկայացւում են շաբաթ եւ կիրակի օրերին անընդհատաբար, եւ որ շաբաթ օրը աւանդաբար մարեմական զօրեղ նկարագիր ունեցող օր է, յանձնարարելի է թւում շաբաթ օր տեղափոխել ուրախութեան խորհուրդների շաբաթական երկրորդ կատարումը, որովհետեւ նրանց մէջ Մարիամի ներկայութիւնը առաւել ցայտուն է: Այսպիսով, հինգշաբթին ազատ է մնում՝ ճիշտ լոյսի խորհուրդների շուրջ մտածման համար:

Այս ցուցմունքը, այնուամենայնիւ, որպէս նպատակ չունի սահմանափակել անձնական կամ հասարակաց խորհրդածութեան պատշաճ ազատութիւնը ըստ հոգեւոր եւ հովուական պահանջների, եւ յատկապէս՝ ըստ ծիսական գուգադիպութիւնների՝ որոնք կարող են պատեհ յարմարեցումներ յուշել: Այն՝ որ իսկապէս կարեւոր է, այն է՝ որ Վարդարանը միշտ աւելի ընկալուի եւ փորձարկուի որպէս հայեցողական ընթացք: Վարդարանի միջոցով - Ծէսի միջոցով արդէն իսկ կատարուածը ամբողջացնող եղանակով - քրիստոնեայի շաբաթը, կիրակիի՝ յարութեան օրուայ առանցքի շուրջ կենտրոնացած, դառնում է Քրիստոսի կեանքի խորհուրդների միջով անցնող ուղեւորութիւն եւ Քրիստոս Իր աշակերտների կեանքից ներս հաստատուում է որպէս ժամանակի եւ պատմութեան Տէր:

# ԷՉՐԼԿԼՑՈՒԹԻՒՆ

«ՄԱՐԻԱՄԻ ՕՐՀՆԵԱԼ ՎԱՐԴԱՐԱՆ,  
ՔԱՂՅՐ ՇՂԹԱՅ՝ ՈՐ ՄԵՉ ԿԱՊՈՒՄ ԵՍ ԱՍՏԾՈՒՆ»

39. Այն՝ ինչ որ մինչեւ այժմ ասացինք, ընդարձակ կերպով արտայայտում է այս աւանդական աղօթքի հարստութիւնը, որ ունի ժողովրդական աղօթքի պարզութիւն, բայց նաեւ աստուածաբանական խորութիւնը մի աղօթքի՝ որ յարմար է նրանց համար՝ ովքեր զգում են առաւել հասուն հայեցողութեան կարիքը:

Եկեղեցին միշտ վաւերացրել է այս աղօթքի իւրայատուկ արդիւնաւէտութիւնը, նրան, նրա հասարակաց կատարմանը, նրա անդադար կատարմանը վստահելով ամենադժուարին խնդիրները: Եղել են ժամանակներ – երբ ինքնին քրիստոնէութիւնը սպառնալիքի ներքոյ էր – որ այս աղօթքի զօրութեանը վերագրուեց վտանգից ազատումը եւ Վարդարանի Տիրամայրը հաւատացեալների ողջոյններն ընդունեց որպէս փրկութեան միջնորդ:

Այսօր, սրտի յօժարութեամբ այս աղօթքի արդիւնաւէտութեանն եմ յանձնում – ինչպէս այս նամակի սկզբնաւորութեան ակնարկեցի – աշխարհում խաղաղութեան եւ ընտանիքի հարցը:

## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

40. Դժուարութիւնները, որ համաշխարհային հորիզոնին ներկայանում են այս նոր Հազարամեակի սկզբնաւորութեան, մղում են մեզ մտածելու՝ որ միմիայն ի վերուստ եկող միջամտութիւնը, ընդունակ՝ կողմնորոշելու հակամարտութեան վիճակներում գտնուողների եւ Ազգերի գալիք օրը հոգացողների սրտերը, կարող է յոյս արթնացնել՝ սպասելու նուազ խաւար ապագայ:

Վարդարանն իր Բնութեամբ իսկ պէտք խաղաղութիւնն կողմնորոշում է քանի որ Վարդարանը հայեցողութիւնն է Քրիստոսի՝ որ խաղաղութեան Իշխանն է եւ «մեր խաղաղութիւնը» (Եփս 2, 14): Ով իւրացնում է Քրիստոսի խորհուրդը – եւ ճիշտ սա է Վարդարանի նպատակը –, սովորում է խաղաղութեան գաղտնիքը եւ այն դարձնում է իր կեանքի ծրագիրը: Սրանից բացի, իր խորհրդածական նկարագրի շնորհիւ, Ողջոյնների հանդարտ յաջորդութեամբ, աղօթողի վրայ Վարդարանը ներգործում է խաղաղարար ազդեցութիւն՝ որով նրան տրամադրում է սեփական էութեան խորութիւններից ներս ընդունելու ու փորձարկելու եւ իր շուրջը տարածելու այն ճշմարիտ խաղաղութիւնը՝ որ Յարուցեալի յատուկ պարգեւն է (հմտ. Յվհ 14, 27; 20, 21):

Վարդարանն, ապա, խաղաղութեան աղօթք է նաեւ սիրոյ պտուղների պատճառով, որ արդիւնաւորում է: Եթէ լաւ է կատարում, որպէս իրական մտածական աղօթք, Վարդարանը, նպաստելով Քրիստոսի հետ հանդիպմանը՝ ընդմէջ իր խորհուրդների, չի կարող նաեւ չմատնանշել Քրիստոսի դէմքը յանձինս եղբայրների, եւ յատկապէս՝ ամենատառապեալ եղբայրների: Ինչպէ՞ս հնարաւոր է սեփական հայեացքը սեւեռել, ուրախութեան խորհուրդների ժամանակ, Բեթղեհէմում ծնուած

Մանկան խորհրդին, առանց զգալու բաղձանքը՝ ընդունելու, պաշտպանելու եւ զարկ տալու կեանքի յառաջադիմութեանը, սեփական ուսերի վրայ առնելով աշխարհի բոլոր երկրամասերի մանուկների տառապանքը: Ինչպէ՞ս հնարաւոր է հետեւել, լոյսի խորհուրդների ժամանակ, յայտնութիւնը բերող Քրիստոսի քայլերին, առանց ինքներս մեր առջեւ պարտականութիւն դնելու՝ վկայելու իր երանութիւնները մեր ամէնօրեայ կեանքում: Եւ ինչպէ՞ս հնարաւոր է տեսնել խաչը կրող եւ խաչուած Քրիստոսին, առանց կարիքը զգալու՝ լինելու իր «կիւրենացիները» յանձինս իւրաքանչիւր եղբօր, որ վշտահար է եւ յուսահատութեան ներքոյ ջախջախուած: Ինչպէ՞ս հնարաւոր է, ի վերջոյ, սեփական աչքերը սեւեռել յարուցեալ Քրիստոսի փառքի եւ Թագուհի կարգուած Մարիամի վրայ, առանց զգալու իղձը՝ դարձնելու այս աշխարհը առաւել զեղեցիկ, առաւել արդար, առաւել մօտ Աստծոյ ծրագրին:

Եզրակացնելով ասենք՝ որ Վարդարանը, մինչ մեր աչքերը սեւեռել է տալիս Քրիստոսի վրայ, միաժամանակ դարձնում է մեզ նաեւ խաղաղութեան շինարարներ աշխարհում: Անդադար եւ խմբային աղերս լինելու իր յատկութեամբ – «միշտ, առանց յոգնելու» աղօթելու Քրիստոսի հրաւերի հետ ներդաշնակութեան մէջ (Ղկս 18, 1) – Վարդարանը թոյլատրում է մեզ յուսալ՝ որ այսօր եւս հնարաւոր է յաղթական ելնել մի այնքան դժուարին «ճակատամարտ»ից՝ ինչպիսին որ է խաղաղութեան համար մղուած պայքարը: Աշխարհը յուզող խնդիրներից փախուստ լինելուց հետո, Վարդարանն այսպիսով մղում է մեզ պատասխանատու եւ վեհանձն նայուածքով դիտելու այդ խնդիրները, եւ մեզ համար ստանում է անհրաժեշտ ուժը՝ վերադառնալու դէպի այդ խնդիրները ա՛յն համոզումով՝ որ Աստծոյ օգնութիւնը ներկայ է, եւ հաստատ առաջադրանքով՝ ամէն տեսակ պարագաներում վկայելու «սիրոյն, որ կատարելութեան գօղն է» (Կղս 3, 14):

## ԸՆՏԱՆԻՔԸ. ԾՆՈՂՆԵՐԸ ...

41. Խաղաղութեան աղօթք լինելով, Վարդարանը նաեւ, եւ միշտ, ընդհանրապէս աղօթիչն է եւ ընդհանրապէս համար կարարութեամբ աղօթիչ է: Ժամանակին այս աղօթքը իւրայատուկ կերպով սիրելի էր քրիստոնէայ ընտանիքներին եւ անկասկած նպաստում էր ընտանիքի անդամների միջեւ հաղորդութեանը: Կորուստի չմատնենք այս թանկագին ժառանգութիւնը: Հարկաւոր է վերադառնալ ընտանիքով համախմբուած աղօթելու եւ ընտանիքների համար աղօթելու սովորութեանը, տակաւին գործածելով աղօթքի այս կերպը:

Ինչպէս «Ակոսող նոր հազարամեակը» Առաքելական Նամակում քաջալերեցի ժամերգութիւնների աղօթքը միայն աշխարհականների մասնակցութեամբ նաեւ, ժողովրդապետական համայնքների եւ քրիստոնէական զանազան խմբաւորումների ամէնօրեայ կեանքից ներս<sup>39</sup>, փափաքում եմ նոյնը կատարել Վարդարանի պարագային: Խօսքը վերաբերում է քրիստոնէական հայեցողութեան ո՛չ թէ ալլընտրանքային, այլ՝ փոխադարձաբար միմեանց ամբողջացնող երկու ուղիների: Բոլոր նրանցից՝ ովքեր նուիրուած են ընտանիքի հովուական առաքելութեանը, խնդրում եմ քրիստոնէաներին համոզումով առաջարկել Վարդարանի աղօթքը:

Ընդհանրապէս՝ որ միացած աղօթում է, միացած էլ մեռած է: Սուրբ Վարդարանը, հնագոյն աւանդութեան համաձայն, ի մասնաւորի ներկայանում է լինելու մի աղօթք՝ ուր ընտանիքը ի մի է համախմբուած: Ընտանիքի անդամները, ճիշտ Յիսուսի վրայ հայեացք նետելով, վերստին ձեռք են բերում են նաեւ միմեանց աչքերի մէջ միշտ

<sup>39</sup> Հմմտ. Թիւ 34: AAS 93 (2001), 290.

նորոգ նայուածքով հայելու կորցրած ունակութիւնը, հաղորդակցուելու համար, ամրակուռ դառնալու համար, փոխադարձաբար իրար ներելու համար, Աստծոյ Հոգու գորութեամբ նորոգուած սիրոյ դաշինքով կրկին ճամփայ ընկնելու համար:

Ժամանակակից ընտանիքների խնդիրներից շատերը, յատկապէս տնտեսական գետնի վրայ յառաջադիմեալ հասարակութիւններում, կախում ունեն այն փաստից՝ որ շարունակ աւելի դժուարին է դառնում հաղորդակցութիւնը: Ընտանիքի անդամները միասին լինելու հնարաւորութիւն չունեն, իսկ այն կարճատեւ պահերը՝ որ կարող են միասին անցկացնել, խեղդուած են հեռուստացոյցի սփռած պատկերներով: Վարդարանի աղօթքի ընտանեկան կատարմանը վերադառնալ՝ նշանակում է ամէնօրեայ կեանքից ներս տարածել ամբողջովին ուրիշ պատկերներ, պատկերները փրկարար խորհրդի պատկերը Փրկչի, պատկերը Իր Ամենասրբուհի Մօր: Ընտանիքը, որ միասին աղօթում է Վարդարանը, որոշակի չափով վերարտադրում է Նազարէթի տան մթնոլորտը. Յիսուս ընտանիքի կենտրոնն է, Նրա հետ ենք կիսում մեր ուրախութիւններն ու նեղութիւնները, Նրա ձեռքերին ենք յանձնում մեր կարօտութիւններն ու ծրագրերը, Նրանից ենք քաղում մեր կեանքի ուղեւորութեան համար անհրաժեշտ յոյսը եւ ուժը:

### ... ԵՒ ԶԱՒԱԿՆԵՐԸ

42. Գեղեցիկ եւ արդիւնաւէտ է նաեւ՝ Վարդարանի աղօթքին վստահել «Եր Կառնէրի» աճը: Մի՞թէ Վարդարանը Քրիստոսի կեանքի աճման ընթացքը չէ, յղացումից մինչեւ մահը, մինչեւ յարութիւնն ու փառաւորումը: Այսօր ծնողների համար շարունակ աւելի տքնաջան է դառնում սեփական զաւակներին հետեւելը, նրանց կեանքի զանազան հանգրուանների ընթացքում: Յառաջադիմեալ գործիքաչինութեան, լրատուութեան միջոցների եւ համընդհանրացման հասարակութեան մէջ ամէն բան դարձել է սաստիկ սրընթաց եւ սերունդների միջեւ մշակութային հեռաւորութիւնը շարունակ աւելի մեծ է: Մանուկների եւ պատանիների կեանքից ներս շուտով տարածք են գրաւում ամենազանազան տեսակի պատգամներ եւ ամենաանսպասելի համարուող փորձառութիւններ, եւ ծնողների համար երբեմն տառապեցուցիչ հանգամանք է դառնում դիմակայելը այն վտանգներին՝ որոնց ենթակայ են տեսնում իրենց զաւակներին: Հազուադիւս չեն ծնողները, որ փորձառութիւնն են ունենում բոլորն յոսախաբութիւնների, տեսնելով իրենց զաւակների ձախողումը թմրամոլութեան հրապոյրների դիմաց, սանձարձակ հաճոյամոլութեան հրապոյրների դիմաց, բռնութեան փորձութիւնների դիմաց, իմաստազրկման եւ յոսահատութեան ամենատարբեր արտայայտութիւնների դիմաց:

Վարդարանի օգնութեամբ աղօթել Կառնէրի Համար, եւ մանաւանդ թէ՛ Կառնէրի Ընդ միասին, ամենադալար տարիքից սկսեալ դաստիարակելով նրանց ընտանիքի «աղօթական ամփոփման» հանապազօրեայ այս պահին, անշուշտ բոլոր հարցերի լուծումը չէ, բայց մի հոգեւոր օգնութիւն է՝ որ չպէտք է թերագնահատել: Ոմանք կարող են առարկել՝ թէ Վարդարանը ժամանակակից պատանիների ու երիտասարդների ճաշակին յարմար աղօթք չէ: Բայց առարկութիւնը թերեւս հաշուի է առնում Վարդարանի կիրարկման յաճախ նուազ խնամուած կերպը: Ինչպէս նաեւ, անփոփոխ պահելով նրա հիմնական կառոյցը, ոչինչ չի արգելում՝ որ Վարդարանի աղօթքը պատանիների ու երիտասարդների համար – ինչպէս ընտանիքից ներս, այնպէս էլ խմբակներում – հարստանայ այլաբանական եւ գործնական յարմար անդրադարձութիւններով, որոնք կարող են նպաստել նրա ըմբռնմանն ու արժէքաւորմանը: Ինչո՞ւ չփորձել: Երիտասարդներին ուղղուած հովուական առաքելութիւնը, որ բացասական չէ, այլ լի է հետաքրքրութեամբ եւ

ստեղծարարութեամբ – Երիտասարդութեան Միջազգային Օրերին զգացի սրա կշիռը –, ընդունակ է, Աստուծոյ օգնութեամբ, կատարելու իսկապէս նշանակալի գործեր: Եթէ Վարդարանը լաւ ներկայացուի, վստահ եմ՝ որ երիտասարդներն իրենք տակաւին ընդունակ կը լինեն մէկ անգամ եւս զարմացնելու հասուն անձերին, իւրացնելով այս աղօթքը եւ այն իրենց տարիքին բնորոշ ոգեւորութեամբ կատարելով:

## ՎԱՐԴԱՐԱՆԸ ՄԻ ԳԱՆՁ Է, ՈՐ ՊԷՏՔ Է ՎԵՐԱՐԺԵՒՈՐԵԼ

43. Սիրեցեալ եղբայրներ եւ քոյրեր: Այս այսքա՛ն դիւրին եւ միաժամանակ այսքա՛ն հարուստ աղօթքը իսկապէս արժանի է քրիստոնեայ հասարակութեան կողմից վերարժեւորուելու: Վարդարանը վերարժեւորենք յատկապէս այս տարուայ ընթացքում, այս առաջարկը ստանձնելով որպէս «Ահա՛ ո՞չ նոր հապարամեակը» Առաքելական Նամակում ուրուագծուած ուղու ամրապնդում. տեղական բազմաթիւ Եկեղեցիների հովուական ծրագրերը այդ ուղուց ներշնչուեցին՝ մօտակայ ապագայի իրենց գործունէութիւնը ծրագրաւորելու համար:

Դիմում եմ յատկապէս ձեզ, սիրեցեալ եղբայրակիցներ Եպիսկոպոսութեան մէջ, քահանաներ եւ սարկաւազներ, եւ ձեզ, զանազան ծառայութիւններ վարող հովուական աշխատակիցներ, որպէսզի, Վարդարանի գեղեցկութեան անձնական փորձառութիւնը ունենալուց յետոյ, դառնաք նրա ժրաջան պաշտպաններն ու տարածողները:

Ձեզ եմ վստահում նաեւ, աստուածաբաններ, որպէսզի գործադրելով միաժամանակ խստապահանջ եւ իմաստուն ուսումնասիրութիւն, արմատաւորուած՝ Աստուծոյ Խօսքի մէջ եւ զգայուն՝ քրիստոնեայ ժողովրդի փորձառական կեանքին, առաջնորդէք բացայայտելու այս աւանդական աղօթքի աստուածաշնչեան հիմքերը, հոգեւոր հարստութիւնները, հովուական վաւերականութիւնը:

Ձեզ եմ վստահում, կրօնաւորներ եւ կրօնաւորուհիներ, որ յատուկ տիրտոսով կանչուել էք հայեցողութեամբ դիտելու Քրիստոսի դէմքը, յաճախելով Մարիամի դպրոցը:

Հայեացքս ուղղուած է ձեզ, կեանքի որեւէ վիճակում ապրող եղբայրներ եւ քոյրեր. ձեզ, քրիստոնեայ ընտանիքներ. ձեզ, հիւանդներ եւ տարեցներ. ձեզ, երիտասարդներ: Աստուծոյ Նորից յեր յեր յեր մեջ առե՛լ Աստուծոյն պատկեր, վերարժեւորելով այն Աստուածաշնչի լոյսի ներքոյ, Մէսի հետ ներդաշնակութեան մէջ, ամէնօրեայ կեանքի բանակարգից ներս:

Թող իմ այս կոչը անպատասխան չմնայ: Քահանայապետութեանս քահանայները տարուայ սկզբնաւորութեան, Կոյս Մարիամի իմաստուն ձեռքերին եմ յանձնում Առաքելական այս Նամակը. հոգեւոր խոնարհում եմ իր պարկեշտ առաջ, որ հոգեւոր եւ երանելի Բարբառ Լոնգոյի՝ Աստուծոյն առաքելալի նախաշնչաւորութեամբ կառուցուած եւ Մարիամին ընթացուած փառաւերջ գրաւորում: Սրտի յօժարութեամբ կրկնում եմ այն յուզիչ խօսքերը, որոնցով երանելին եզրափակում է Սուրբ Աստուծոյն թաղանթաւորութեամբ հանրայայտ Ազատութիւնը. «Ո՛վ Մարիամի օրհնեալ Վարդարան, քաղցր շղթայ՝ որ մեզ Աստուծուն ես կապում, սիրոյ զօր՝ որ մեզ Հրեշտակներին ես միացնում, փրկութեան աշտարակ՝ ընդդէմ դժոխքի յարձակումների, ապահով նաւահանգիստ՝ համընդհանուր նաւաբեկութեան մէջ, մենք քեզ այլեւս երբեք չենք լքելու: Դու ես լինելու մեր մխիթարութիւնը՝ հոգեվարքի ժամին: Քեզ թող ուղղուի հանգչող կեանքի

վերջին համբոյրը: Եւ մեր շուրթերի վերջին ջունջը լինելու է քո քաղցր անունը, ո՛վ Փոմփէյի Վարդարանի Թագուհի, ո՛վ մեր թանկագին Մայր, ո՛վ մեղաւորների Ապաստան, ո՛վ տրտում հոգիների մխիթարիչ Իշխանուհի: Ամէնուր օրհնեալ լինես, այժմ եւ միշտ, երկրի վրայ եւ երկինքում»:

Վատիկանից, 2002 թուականի Հոկտեմբերի 16ին, Քահանայապետութեան քսանհինգերորդ տարուայ սկզբնաւորութեան:

*Joannes Paulus PP II*

